10.57192/18291864-2024.2-24

Էդգար Գ. Հովհաննիսյան
Պատմ. գիտ. թեկնածու

1945 Թ. ԱԶԳԱՅԻՆ–ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոր փուլ Էջմիածին–Անթիլիաս հարաբերություններում*

Բանալի բառեր – Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն, Անթիլիաս, Գևորգ Ջ Չորեքչյան, Գարեգին Ա. Հովսեփյան, ազգային–եկեղեցական ժողով, Էջմիածին–Անթիլիաս հարաբերություններ:

Մուտք

Կիլիկիայից Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության տարագրությունից հետո Էջմիածին–Անթիլիաս հարաբերություններում տեղի ունեցան էական փոփոխություններ, ուստի 1920–1940–ական թվականներին երկու կաթողիկոսական աթոռների հարաբերությունները դրականորեն տարբերվում էին դրանից առաջ և հետո ընկած շրջաններից: Այլևս չկար Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցու (Քերեստեճյան) և Կիլիկիո կաթողիկոս Մկրտիչ Ա. Քեֆսիզյանի[1] կաթողիկոսության շրջանի լարված և անառողջ մթնոլորտը:

1920–1930–ական թթ. Էջմիածին–Անթիլիաս հարաբերություններում ստեղծված բարվոք վիճակը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Նախ՝ տարագիր Կիլիկիո կաթողիկոսությունը հայտնվել էր խիստ ծանր վիճակում: Կիլիկիո Աթոռը ոչ միայն դժվարությամբ էր լուծում իր

---

*Հոդվածն ընդունվել է տպագրության 27.05.2024: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A224 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

[1] **Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցին (Քերեստեճյան)** – գահակալել է 1866–1882 թթ., իսկ **Մկրտիչ Ա Քեֆսիզյանը**՝ 1871–1894 թթ.:

առջև ծառացած բազում խնդիրները, այլ նաև մի պահ սպառնալիքի տակ էր հայտնվել անգամ կաթողիկոսության գոյությունն առհասարակ: Խիստ ծանր վիճակում էր հայտնվել նաև Մայր Աթոռը հայրենիքում, որովհետև 1920-ական թթ. կեսերին Խորհրդային Հայաստանում մեկնարկած հակաեկեղեցական և հակակրոնական քաղաքականությունն ամբողջությամբ ջլատել և թուլացրել էր հայոց եկեղեցին[2]:

Երկու նվիրապետական աթոռների հարաբերություններում ջերմ մթնոլորտը շարունակվեց պահպանվել նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Պատերազմի շրջանում Էջմիածին-Անթիլիաս հարաբերությունների ջերմացման ֆոնին Անթիլիասի պաշտոնաթերթ «Հասկ»-ի էջերում պարբերաբար հայտնվում էին խմբագրականներ և հոդվածներ՝ «Վերածաղկում Ս. Էջմիածնի»[3], «Եկեղեցու վերականգնումը Սովիէթ Միութեան մէջ»[4] և այլն, որոնք ընդգծված դրական լույսի ներքո էին ներկայացնում երկու նվիրապետական աթոռների հարաբերությունները:

«Վերածաղկում Ս. Էջմիածնի» հոդվածում «Հասկ»-ը պաշտոնաթերթը խանդավառությամբ էր խոսում Մայր Աթոռի վերածննդի, եկեղեցի-պետություն հարաբերությունների կարգավորման, Մայր Աթոռի հրատարակչական գործունեության, համաշխարհային պատերազմում տարած հաղթանակի գործում հայոց եկեղեցու ունեցած ներդրման մասին՝ մատնանշելով, որ. «Ս. Էջմիածին նոր հետաքրքրական կենդրոն դարձած է և հաղորդակցութեան կապ եղած Մայր Հայրենիքի և Սփիւռքի հայութեան միջեւ»՝ միաժամանակ ընդգծելով, որ «Կիլիկիո կաթողիկոսութիւնը իր Աթոռակալ Հայրապետներուն բերնով միշտ յայտարարած է Ս. Էջմիածնի կողքին զօրավիգ կանգնելու իր կամքը և Հայաստանեայց Եկեղեցւոյ միասնականութիւնը, ներքին բաժանումներու գոյութեամբ հանդերձ: Եւ Ս. Էջմիածնի վերածաղկումին այս առթիւ անգամ մը եւս Կիլիկիո կաթողիկոսութիւնը կը յայտնէ իր ուրախութիւնը Էջմիածնի մէջ տեսնուած խանդավառութեանց մասին և կը միացնէ ամէն կերպով անոր օգնելու իր պատրաստակամութեան՝ շուտով եկեղեցական Ընդհ. ժողովի գումարման և Կաթողիկոսի ընտրութեան բարեմաղթութիւնները»[5]:

---

[2] Տե՛ս **Հովհաննիսյան Է.**, Մարտնչող անաստվածների միության գործունեությունը Խորհրդային Հայաստանում 1920-1930-ական թթ., «Էջմիածին», Ս. Էջմիածին, հունվար, 2014 թ., N 1, էջ 100-107:

[3] «Հասկ», Անթիլիաս, օգոստոս-հոկտեմբեր, 1944, N 8-10, էջ 110-114:

[4] Նույն տեղում, էջ 126-129:

[5] Նույն տեղում, էջ 110, 113:

Ընդհանուր մարտահրավերները և հայոց եկեղեցու պահպանման հետագա հրամայականը կարևոր խմբագրումներ էր մտցրել երկու նվիրապետական աթոռների հարաբերություններում: Անհրաժեշտ և վտանգավոր էր ռեսուրսները ներքին պայքարի և մրցակցության վրա վատնելը: Ամեն ինչ պետք էր կենտրոնացնել ստեղծված ծանր վիճակից հայոց եկեղեցին հնարավոր անկորուստ դուրս բերելու ուղղությամբ:

Այս շրջանում Էջմիածին-Անթիլիաս հարաբերությունների ջերմացմանը, մեր կարծիքով, իրենց կարևոր նպաստը բերեցին նաև այն բարձրաստիճան հոգևորականները, որոնց վիճակված էր ղեկավարել հայոց եկեղեցու երկու նվիրապետական աթոռները. Գևորգ Ե. Սուրենյանց, Խորեն Ա. Մուրադբեկյան, Գևորգ Զ. Չորեքչյան, Սահակ Բ. Խապայան, Պետրոս Ա. Սարաճյան, Գարեգին Ա. Հովսեփյան. ահա այն վեց գահակալները, ովքեր ղեկավարում էին հայոց կաթողիկոսական աթոռները վերը նշված ժամանակաշրջանում:

1. Կաթողիկոսական ընտրություններ կազմակերպելու՝ 1941 թ. անհաջող փորձը

1938 թ. Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա. Մուրադբեկյանի եղերական մահից հետո կաթողիկոսական գահը ավելի քան յոթ տարի մնաց թափուր: Դեռևս 1936 թ. ապրիլի 18-ի կոնդակով Խորեն Մուրադբեկյանը Գևորգ արք. Չորեքչյանին կարգել էր Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահ և Գերագույն Հոգևոր խորհրդի նախագահ[6]: Վերջինս Խորեն Ա.-ի մահից անմիջապես հետո ստանձնել էր հայոց եկեղեցու փաստացի ղեկավարումը մի բարդ և բախտորոշ ժամանակաշրջանում:

Մայր Աթոռը հայտնվել էր ծանր վիճակում: Անհրաժեշտ էր ամեն ինչ անել կաթողիկոսական ընտրություններ կազմակերպելու և նոր գահակալ ընտրելու համար: Այդ ամենի համար նախ և առաջ անհրաժեշտ էր ստանալ խորհրդային իշխանությունների համապատասխան թույլտվությունը, ինչը բավականին բարդ խնդիր էր այդ շրջանում:

1939 թ. մայիսին Գևորգ սրբազանը դիմել էր ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը կաթողիկոսական ընտրություններ կազմակերպելու թույլտվություն ստանալու համար: Ավելի քան մեկ տարի անց՝

---

[6] Տե՛ս Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Բ, Խորեն Ա Մուրադբեկյան. Կաթողիկոս Ամենայն Հայոց (1932-1938 թթ.), Եր., 1996, կազմող՝ **Ս. Բեհբուդյան**, էջ 563:

1940 թ. հունիսի 7-ին, Գերագույն խորհրդի նախագահության կողմից թույլատրվում է 1940 թ. հրավիրել ազգային-եկեղեցական ժողով և անցկացնել կաթողիկոսական ընտրություններ: Այդ մասին տեղեկացվում են Կիլիկիո կաթողիկոսությունը, Երուսաղեմի և Պոլսո պատրիարքություններն ու արտասահմանի թեմերը[7]:

Երկար ձգձգումներից հետո 1941 թ. ապրիլի 10-13-ն ընկած ժամանակահատվածում Էջմիածնում վերջապես հրավիրվում է ազգային-եկեղեցական ժողովը: Այն հրավիրվել էր դեռևս 1925 թ. հոկտեմբերի 22-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի կողմից հաստատված «Ազգային-եկեղեցական ժողով գումարելու յատուկ կանոնադրութեան»[8] հիման վրա: Այդ կանոնադրության 25-րդ կետով նախատեսված էր, որ այն պետք է ուժի մեջ մնար մինչև առաջիկա ազգային-եկեղեցական ժողովի հրավիրումը[9]: Կանոնադրությամբ նախատեսվում էր հայոց եկեղեցու բոլոր նվիրապետական աթոռների մասնակցությունը ազգային-եկեղեցական ժողովին: Կանոնադրության 7-րդ կետի Ա. ենթակետով հենց ազգային եկեղեցական ժողովին էր վերապահված Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության իրավունքը[10]: Նշենք, որ այս կանոնադրության հիման վրա 1932 թ. արդեն մեկ անգամ հրավիրվել էր ազգային-եկեղեցական ժողով, որը կաթողիկոս էր ընտրել Խորեն արք. Մուրադբեկյանին: Ազգային-եկեղեցական այդ ժողովին Կիլիկիո կաթողիկոսության ներկայացուցիչները տարբեր պատճառներով չէին կարողացել մասնակցել[11]:

1941 թ. ապրիլին հրավիրված ազգային-եկեղեցական ժողովում չի հաջողվում ընտրել նոր կաթողիկոս: Թեև ժողովի մասնակիցների թիվը թույլ էր տալիս կատարել կաթողիկոսական ընտրություն, սակայն նորընտիր կաթողիկոսին օծելու համար անհրաժեշտ էր 12 եպիսկոպոսների մասնակցությունը[12]: Բավարար թվով եպիսկոպոսների բացակայության պատճառով կաթողիկոսական հերթական ընտրությունները չկայացան:

1941 թ. ապրիլին հրավիրված ազգային-եկեղեցական ժողովն, այնուամենայնիվ, «Հայաստանեայց ընդհանրական եկեղեցին բարւոք կա-

[7] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3861, թ.13: Տե՛ս նաև՝ «Սիոն», Երուսաղէմ, հուլիս-օգոստոս, 1940, N 7-8, էջ 166-169:
[8] ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 49, թթ. 1-4:
[9] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 115. թ. 3, շրջերես:
[10] Տե՛ս Ազգային-եկեղեցական ժողովի հրավիրելու հատուկ կանոնադրություն, էջ 1 (ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 317, թ. 1):
[11] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4475, թ. 1-8:
[12] Տե՛ս **Մադոյան Ա.,** Գէորգ Ջ Չորէքչեան. Կաթողիկոս Ամենայն հայոց, Էջմիածին, 2011, էջ 115:

ռավարելու նպատակով» Գևորգ արք. Չորեքչյանին ընտրում է Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահ[13]:

Հետաքրքրական է, որ ազգային-եկեղեցական այս ժողովին արտասահմանի հայոց թեմերից մասնակցում էր միայն Կիլիկիո կաթողիկոսությունը ներկայացնող Խաղ արք. Աջապահյանը[14]: Սա աննախադեպ երևույթ էր. առաջին անգամ էր, որ Կիլիկիո կաթողիկոսության պատվիրակը ներկա էր գտնվում Մայր Աթոռում հրավիրված ազգային-եկեղեցական ժողովին: Նշենք, որ այդ շրջանում Կիլիկիո կաթողիկոսական գահը ևս թափուր էր: 1940 թ., Պետրոս Ա. Սարաճյանի մահից հետո, նոր կաթողիկոս չէր ընտրվել, թեև 1941 թ. կաթողիկոս ընտրելու անհաջող փորձ մեկ անգամ կատարվել էր[15]:

Շաբաթներ անց Խորհրդային Միությունն ընկղմվում է համաշխարհային պատերազմի հորձանուտը: Հայոց հայրապետի հերթական ընտրությունը տեղի է ունենում միայն աշխարհավեր այդ պատերազմի ավարտից հետո: Հայտնի է, որ պատերազմի տարիներին Մայր Աթոռը հսկայական ներդրում է ունեցել նացիզմի դեմ տարած հաղթանակում[16]: Այդ ամենին անմասն չմնաց նաև Կիլիկիո կաթողիկոսությունը[17]:

2. Ազգային-եկեղեցական նոր ժողով հրավիրելու նախապատրաստական աշխատանքները

Հայ առաքելական եկեղեցին երկրորդ աշխարհամարտի վերջում, խորհրդային իշխանությունների թույլտվությամբ, աստիճանաբար սկսում է վերականգման մի գործընթաց[18], որն անշուշտ, իր դրական ազդեցությունն էր ունենալու ոչ միայն Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների,

---

[13] Տե՛ս Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Ջ, Գէորգ Ջ Չորէքչէան. Կաթողիկոս Ամենայն Հայոց (1938-1955 թթ.), Եր., 1999, կազմող՝ **Ս. Բեհբուդյան**, էջ 112-113:

[14] Տե՛ս «Հասկ», Անթիլիաս, մարտ-ապրիլ, 1941, N 3-4 էջ 51:

[15] Տե՛ս **Հովհաննիսյան Է.**, Կիպրոսի թեմի վերակազմությունը և կիպրահայությունը (1920-1940 թթ.). Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյան, Եր., 2021, էջ 126-127: ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4496, թ 15, 21, 26: «Հասկ», Անթիլիաս, նոյեմբեր-դեկտեմբեր, 1941, N 11-12, էջ 169:

[16] Տե՛ս **Տերչանյան Ա.**, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945 թթ), Եր., 2010, էջ 32-66:

[17] Տե՛ս **Հովհաննիսյան Է.,** Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ներդրումը երկրորդ աշխարհամարտում տարված հաղթանակում, «Հայ ժողովրդի մասնակցությունը երկրորդ աշխարհամարտին, գիտաժողովի զեկուցումների ժողովածու», Եր., 2020, էջ 122-135:

[18] Տե՛ս **Տերչանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 66-96:

այլ նաև Մայր Աթոռի և հայոց եկեղեցու նվիրապետական մյուս աթոռների և արտասահմանյան թեմերի փոխհարաբերությունների վրա:

1943 թ. նոյեմբերի 10-ին, հիմք ընդունելով ՀամԿ(բ)Կ կենտկոմի հոկտեմբերի 29-ին կայացրած համապատասխան որոշումը, ՀԿ(բ)Կ կենտկոմի բյուրոն որոշում ընդունեց ՀԽՍՀ ժողկոմխորհին կից ստեղծել Հայ առաքելական եկեղեցու գործերով խորհուրդ[19]: Նորաստեղծ կառույցն իր կանոնադրության համաձայն պետք է համակարգեր նաև պետություն-եկեղեցի հարաբերությունները[20]:

Մոտենում էր պատերազմի հաղթական ավարտը: Ժամանակի ընթացքում էականորեն փոխվել էր խորհրդային իշխանությունների վերաբերմունքը հայոց եկեղեցու նկատմամբ: Այդ ամենում հաշվի էր առնվում նաև հայոց եկեղեցու դերը նացիզմի դեմ տարած հաղթանակի գործում: Պատահական չէր նաև, որ Կաթողիկոսի տեղապահ Գևորգ արք. Չորեքչյանին շնորհվեց «Կովկասի պաշտպանության համար» մեդալ[21]:

Խորհրդային իշխանությունների՝ հայոց եկեղեցու նկատմամբ վերաբերմունքի փոփոխության կարևոր փաստ էր նաև կաթողիկոսի տեղապահ Գևորգ արք. Չորեքչյանի՝ 1945 թ. ապրիլի 3-ի նամակը՝ ուղղված Ստալինին: Այդ նամակում Չորեքչյանը 11 կետից բաղկացած առաջարկություններ էր ներկայացրել Ստալինին, որոնք վերաբերում էին հոգևոր ճեմարանի բացմանը, «Էջմիածին» հանդեսի տպագրությանն ու տպարանի հիմնադրմանը, Մայր Աթոռի տարածքի ընդլայնմանը, մի շարք եկեղեցիներ Մայր Աթոռին վերադարձնելուն, Զվարթնոցի տաճարի վերականգնմանը, արտասահմանից ուխտավորների և հոգևորականների ժամանման թույլտվությանը, բանկում արտարժույթի հաշիվ ունենալուն, արտասահմանից նվերներ ստանալու թույլտվությանը և այլն: Ներկայացված բոլոր առաջարկներին Ստալինը տվել է իր համաձայնությունը[22]:

1945 թ. ապրիլի կեսերին կաթողիկոսի տեղապահ Գևորգ արք. Չորեքչյանն այցելում է Մոսկվա, հանդիպում ԽՍՀՄ ժողկոմսովետին կից Եկեղեցական հարցերով խորհրդի նախագահ Իվան Պոլյանսկիին և քննարկում հայոց եկեղեցուն առնչվող մի շարք հարցեր: Նույն թվականի ապրիլի 19-ին Մոսկվայում տեղի է ունենում ԽՍՀՄ ժողկոմսովետի նախագահ Ի. Ստալինի և Գևորգ արք. Չորեքչյանի հանդիպումը[23]: Վերջինս

[19] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 23, գ. 37, թ. 105, ֆ. 823, ց. 3, գ. 1, թ. 1:
[20] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 1, թ. 6:
[21] «Коммунист», Ереван, 16 июня, 1945, N 125:
[22] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 1, թթ. 1-4, ց. 1, գ. 5, թթ. 1-4:
[23] Տե՛ս «Սովետական Հայաստան», Եր., 20 ապրիլի 1945, N 77:

Ստալինին է ներկայացնում 11 կետից բաղկացած վերոհիշյալ նամակը[24]: Հանդիպմանը ներկա է լինում նաև Ի. Պոլյանսկինը[25]: Գևորգ սրբազանը, հետագայում անդրադառնալով այդ հանդիպմանը, նշում է, որ Ստալինը. «...լսելով Մեր զեկուցումը Ս. Էջմիածնի մի շարք կարիքների մասին անձնական մակագրութեամբ, դրականապէս լուծեց, որ երկրի և Մեզ համար օրէնք դարձաւ»[26]:

Այս ամենի արդյունքում էլ վերջնականապես հստակեցվում է 1945 թ. հունիսին ազգային-եկեղեցական ժողով հրավիրելու և, վերջիվերջո, հայոց կաթողիկոս ընտրելու հարցը: Կարևոր է նշել, որ այդ հանդիպումից դեռևս մոտ մեկ տարի առաջ՝ 1944 թ. օգոստոսին, ՀամԿ(բ)կ կենտկոմը, ԽՍՀՄ պետանվտանգության ժողկոմատի համապատասխան առաջարկի հիման վրա, գաղտնի կարգով որոշում էր կայացրել թույլատրել 1945 թ. հայոց եկեղեցու ազգային-եկեղեցական ժողովի հրավիրումը արտասահմանի թեմերի մասնակցությամբ[27]: Ըստ էության, Ստալինի հետ Զորեքչյանի հանդիպման ժամանակ ընդամենը ֆորմալ ձևով հաստատվեցին և հրապարակայնացվեցին դեռևս մեկ տարի առաջ խորհրդային իշխանությունների ընդունած որոշումն այս հարցում: Իսկ ՀԿ(բ)կ կենտկոմի բյուրոն ազգային-եկեղեցական ժողովի թույլատրման հարցին անդրադարձել էր 1945 թ. մարտի 30-ի նիստում՝ տալով դրական եզրակացություն[28]:

Նշենք, որ դեռևս 1944 թ. խորհրդային իշանություններն սկսել էին ազգային-եկեղեցական ժողովի կազմակերպման նախապատրաստական աշխատանքները: Խորհրդային իշխանությունների հատուկ որոշմամբ և հատկացրած միջոցներով 1944 թ. սկսել էին վեհարանի, Գևորգյան ճեմարանի և Մայր տաճարի վերանորոգման աշխատանքները, որոնք ավարտվեցին 1945 թ. մայիսի վերջին[29]: Իրականացվում էին նաև կազմակերպական մի շարք այլ աշխատանքներ: Նախատեսվել էր նաև ազգային-եկե-

---

[24] Տե՛ս **Ստեփանյանց Ս.**, Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Եր., 1994, էջ 161-169:

[25] Տե՛ս «Սովետական Հայաստան», Եր, 20 ապրիլի 1945, N 77:

[26] Զեկուցում Ս. Էջմիածնի հոգեւոր իշխանութեան իր քառամեայ գործունեութեան մասին (1941-1945), ա.թ., էջ 12:

[27] Տե՛ս Հասարակական-քաղաքական պատմության ռուսական պետական արխիվ, ֆ. 17, ց. 162, գ. 37, թ. 135, (https://media.alexanderyakovlev.org/fond/issues-doc/58916 հասանելի է 05.12.2023):

[28] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 25, գ. 31, թ. 65:

[29] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 3, թ. 1:

ղեցական ժողովին նվիրված ֆիլմի նկարահանում, որն արդեն 1945 թ. սեպտեմբերին ցուցադրվում է Երևանի «Մոսկվա» կինոթատրոնում[30]:

1945 թ. ազգային-եկեղեցական ժողովը ևս հրավիրվելու էր 1925 թ. ստեղծված՝ արդեն հիշատակված կանոնադրության հիման վրա: Մայր Աթոռն սկսում է լայնածավալ նախապատրաստական աշխատանքներ: Հեռագրեր են ուղարկվում բոլոր նվիրապետական աթոռներին և թեմերին՝ ազգային-եկեղեցական ժողովի համար հոգևորական և աշխարհական պատգամավորների շուտափույթ ընտրություններ կազմակերպելու վերաբերյալ: «Եկեղեցական և աշխարհական որևէ մէկ իրաւասու ներկայացուցիչ չպէտք է թերանայ մեր Եկեղեցւոյ այս նոր *արշալոյսին* (ընդգծումը բնագրինն է- Է. Հ.) մէջ՝ Մայր Աթոռոյ Գահակալին ընտրութեանը բերելու իր մասնակցութիւնը, որպէսզի անիկա կատարուի ընդհանուր և անօրինական խանդավառութեամբ»,- գրում էր Երուսաղեմի հայոց պատրիարքության պաշտոնաթերթ «Սիոն»-ը[31]:

1945 թ. ազգային-եկեղեցական ժողովի նախապատրաստական աշխատանքներում կարևոր նշանակություն ունեցավ նաև պրոֆ. Աշոտ Աբրահամյանի՝ որպես Մայր Աթոռի նվիրակ, արտասահմանի թեմեր կատարած այցելությունը:

Մայր Աթոռի և մյուս նվիրապետական աթոռների ու թեմերի միջև փոխհարաբերություններում հստակություններ մտցնելու, առկա խնդիրներին ծանոթանալու տեսանկյունից կարևոր էր Ամենայն հայոց հայրապետների հնավանդ սովորույթներից մեկը՝ նվիրակներ ուղարկելը արտասահմանի թեմեր: Նվիրակները, որպես կանոն, իրենց հետ տանում էին մյուռոն, տեղում ծանոթանում էին առկա խնդիրներին և ապահովում կենդանի ու անմիջական կապ արտասահմանի հոգևոր կենտրոնների հետ: Առաջնորդվելով այդ սովորությամբ՝ դեռևս 1941 թ. ապրիլի 10-ին ազգային- եկեղեցական ժողովը որոշել էր. «Յանձնարարել Գեր. Հոգ. Խ.-ին պարբերաբար ուղարկել լիազօր ներկայացուցիչներ Միութենական և Արտասահմանեան թեմերը ծանօթանալու նոցա իրական վիճակին, Հոգևոր իշխանութեան գործունէութեան, թեմերի կարիքներին և պահանջներին և որոշ ցուցումներ տալու համար, այլ և թեմերի և Մայր Աթոռի մէջ գոյութիւն ունեցող կապը առաւել խորացնելու և սերտացնելու

[30] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 3, թ. 3:
[31] «Սիոն», Երուսաղէմ, հունվար-փետրվար, N 1-2, 1943, էջ 5, 30:

նպատակով և այս բոլորի մասին զեկուցանելու Ս. Էջմիածնի Հոգ. Բարձր Իշխանութեան»[32]:

Հիմք ընդունելով այդ որոշումը՝ 1944 թ. Մերձավոր Արևելքի թեմեր, Կիլիկիո կաթողիկոսություն և Երուսաղեմի պատրիարքություն, որպես Մայր Աթոռի նվիրակ, ուղարկվում է Գերագույն հոգևոր խորհրդի գիտական քարտուղար, պրոֆեսոր Աշոտ Աբրահամյանը՝ իրեն ուղեկցող ունենալով ուսուցիչ Անուշավան Տեր-Գրիգորյանին[33]: Վերջիններս շուրջ կես տարի շրջում են հայկական սփյուռքի տարբեր համայնքներում: 1944 թ. սեպտեմբերի 12-26-ը այցելում են Անթիլիաս և Կիլիկիո կաթողիկոսության մյուս թեմեր[34]: Այս պատվիրակության վրա, բազմաթիվ հարցերից բացի, խնդիր էր դրված նաև. «ազգային-եկեղեցական ժողովի գումարմանն յաջողելու»[35]: Հետագայում Գևորգ արք. Չորեքչյանը ազգային-եկեղեցական ժողովի բացման իր խոսքում, դրական գնահատելով պատվիրակության գործունեությունը, ազգային-եկեղեցական ժողովին «արտասահմանեան պատգամաւորների բազմութիւնը և որակեալ լինելու հանգամանքը» պայմանավորում է հենց այդ պատվիրակության բարեխիղճ աշխատանքով[36]:

Ոչ միայն հայոց եկեղեցու նվիրապետական աթոռներն ու թեմերը, այլ նաև Սփյուռքի ողջ հայությունը մեծ ոգևորությամբ են ընդունում Մայր Աթոռում ազգային եկեղեցական ժողով հրավիրելու և կաթողիկոսական ընտրություններ անցկացնելու որոշումը: Այս մասին են վկայում սփյուռքյան մամուլի արձագանքները[37]:

Այսպիսով, հայրենիքում ամեն-ինչ արված էր Ամենայն հայոց հայրապետի ընտրությունները պատշաճ կազմակերպելու համար:

Հայոց եկեղեցու բոլոր թեմերում և նվիրապետական աթոռներում մեկնարկում է ազգային-եկեղեցական ժողովի աշխարհիկ և հոգևոր պատգամավորների ընտրության գործընթացը[38]: Կիլիկիո կաթողիկո-

---

[32] Զեկուցում Ս. Էջմիածնի հոգեւոր իշխանութեան իր քառամեայ գործունեութեան մասին (941-1945), ան. թվ., էջ 4:

[33] Տե՛ս «Էջմիածին», Ս. Էջմիածին, ապրիլ-մայիս, 1944, N 4-5 էջ 3-6:

[34] Տե՛ս «Հասկ», Անթիլիաս, օգոստոս-հոկտեմբեր, 1944, N 8-10, էջ 114:

[35] Զեկուցում Ս. Էջմիածնի հոգեւոր իշխանութեան իր քառամեայ գործունեութեան մասին (941-1945), ան. թվ., էջ 5:

[36] Տե՛ս նույն տեղում, էջ 6:

[37] «Էջմիածին», Ս. Էջմիածին, մարտ-ապրիլ, 1945, N 3-4, էջ 6:

[38] Տե՛ս **Տերչանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 101-104: Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, Գիրք ԻԳ, Տ. Ներսէս արք. Մելիք-Թանգեան (1866-1948), Ս.Էջմիածին, 2020, կազմող՝ **Գ. Աւագեան,** էջ 460-461:

սությունը ևս սկսում է նախապատրաստվել այդ կարևոր իրադարձությանը:

3. Կիլիկիո կաթողիկոսության նախապատրաստական աշխատանքները ազգային-եկեղեցական ժողովին մասնակցելու ուղղությամբ

Թեև երկու կաթողիկոսական աթոռների միջև հարաբերություններում ընդգծված փոփոխություններ նկատվում էին դեռևս 1920-ական թթ. սկսած: Գարեգին արք. Հովսեփյանի՝ Կիլիկիո գահակալ ընտրվելուց հետո այդ հարաբերությունները սկսեցին ավելի ջերմանալ: 1943 թ. մայիսին Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին»-ի բնութագրմամբ՝ հայոց եկեղեցու «ականավոր ներկայացուցիչներից և խոշորագույն դեմքերից մեկը»[39]՝ Գարեգին արք. Հովսեփյանը, Անթիլիասում՝ իր բացակայության պայմաններում, ընտրվել է Կիլիկիո կաթողիկոս: Այդ մասին հեռագրով տեղեկացվել է նաև Մայր Աթոռը[40]: Գարեգին Հովսեփյանի ընտրությունը ողջունվում է հայոց եկեղեցու մյուս նվիրապետական աթոռների, ինչպես նաև Սփյուռքի լայն շրջանակների կողմից[41]: Գարեգին սրբազանը պատերազմի հարուցած դժվարությունների պատճառով Անթիլիաս է հասնում շուրջ երկու տարի անց և հանդիսավորությամբ օծվում է Կիլիկիո Աթոռի նոր գահակալ: 1945 թ. հունիսի սկզբին Մայր Աթոռից ևս Գարեգին Հովսեփյանին հեռագրով սրտանց շնորհավորում են կաթողիկոսական օծման առթիվ[42]:

Գարեգին արք. Հովսեփյանը, դեռևս Ամերիկայի հայոց առաջնորդ եղած ժամանակ, իր իսկ հիմնադրած «Հայոց եկեղեցի» պաշտոնաթերթի էջերում հստակ արտահայտում էր իր տեսակետներն Ամենայն հայոց և Կիլիկիո կաթողիկոսությունների ու վերջիններիս փոխհարաբերությունների վերաբերյալ: Անդրադառնալով առանձին շրջանակներում տարածվող տեսակետին՝ Մայր Աթոռի որոշ իրավունքներ Սփյուռքում Կիլիկիո Աթոռին փոխանցելու վերաբերյալ՝ նա գրում էր. «Ըստ մեզ, այդպիսի մտքերի արծարծումը ոչ միայն հակապատմական է, հայ եկեղեցու ծագման եւ հաստատութեան աւանդութիւնների եւ հոգու դէմ մեղանչում, այլ եւ վնասակար:...Հայրենիքից դուրս աթոռի հաստատութիւնը դժբաղդ,

[39] «Էջմիածին», Ս. Էջմիածին, հունվար-փետրվար, 1945, N 1-2, էջ 14:
[40] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4496, թ. 34-35:
[41] Տե՛ս «Սիոն», Երուսաղեմ, մայիս-հունիս, N 5-6, 1943, էջ 65-67:
[42] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4496, թ. 30-31:

պատմական հանգամանքների արդիւնք է..., ինչպէս Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութիւնն է ցոյց տալիս հէնց թագավորութեան կանգուն ժամանակն իսկ», ապա, անդրադառնալով Հայոց եկեղեցու միասնականության և նվիրապետական աթոռների հարաբերություններին՝ նշում է. «Անշուշտ, Կիլիկիոյ Հայրապետական Աթոռը մեր համար նոյնպէս արժէքաւոր է, *անքակտելի* (ընդգծումը հեղինակին է), մասն է այն Հայաստանեայց Եկեղեցւոյ ամբողջութեան, ինչպէս Երուսաղէմի եւ Կ. Պոլսի պատրիարքութիւններն են, իրենց ներքին եւ տեղական խնդիրների նկատմամբ անկախ, բայց դաւանաբանական-ծիսական եւ արտաքին եկեղեցիների հետ ունեցած յարաբերութեան մէջ ենթակայ ամբողջութեան գլուխ Հայաստանեայց Ընդհանրական, կամ ինչպէս սովորական է դարձած ասել, Ամենայն Հայոց կաթողիկոսին: Վերոհիշյալ աթոռների գահակալները գործակից են Ընդհանրական Հայրապետին եկեղեցական կարեւորագոյն խնդիրների մէջ, բայց սա է ազգային-եկեղեցական մեծ ժողովների նախագահը, հրաւիրողն ու կազմակերպողը, կանոնական որոշումների հրատարակողն ու հարկաւոր ժամանակ լուսաբանողը, մեր եկեղեցական միութեան գլուխը»[43]:

Կիլիկիո նորընտիր կաթողիկոս Գարեգին արք. Հովսեփյանը կաթողիկոս ընտրվելուց հետո բազմիցս հրապարակավ հայտարարում է անձամբ Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրություններին մասնակցելու ցանկության մասին:

Վերջինս, մինչ Անթիլիաս ժամանելը և կաթողիկոսական պաշտոնն ստանձնելը, 1944 թ. «Հասկ»-ի էջերում հանդես է գալիս «Մեր իղձերն ու յոյսերը որպէս կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ» խորագիրը կրող հոդվածով: Այդ հոդվածը վերատպվում է նաև Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» հանդեսի էջերում: Այդտեղ պատերազմի պատճառով դեռևս Ամերիկայում գտնվող նորընտիր կաթողիկոսն իր առաջին իղձը, պատերազմի ավարտից ու խաղաղության հաստատումից հետո, համարում է Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությունը կատարված տեսնելը: Գարեգին սրբազանը հստակ նշում է նաև կաթողիկոսական ընտրություններին մասնակցության իր ցանկության մասին. «Իսկ մենք իբրև կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ կը կամենայինք մեզ ենթակայ եպիսկոպոսների հետ նոյնպէս ներկայ լինել ընտրութեան և ապա գլխաւորել նորընտիր Ամե-

[43] «Հայոց Եկեղեցի», Յունիս, 1940, N 6: «Գարեգին կաթողիկոս Յովսէփեանց», Հրատարակութիւն Ամերիկայի հայոց առաջնորդարանի Մեծի Տանն Կիլիկիոյ երանաշնորհ կաթողիկոսին մահուան տասներորդ տարեդարձին առթիւ, Նյու-Յորք, 1962, էջ 18-19:

նայն Հայոց Հայրապետի և կաթողիկոսի ձեռնադրութեան և օծման սրբազան արարողութիւնը»՝ միաժամանակ ընդգծելով. «Այդ կը լինէր պատմական արժէքով մի մեծ դէպք, եկեղեցական-համազգային նշանակութեամբ, շեշտելով Հայաստանեայց Եկեղեցու անքակտելի միութիւնը բոլոր բարձր Աթոռների սերտ գործակցութեամբ»[44]:

Հետաքրքիր է նշել, որ Գարեգին Հովսեփյանը, դեռևս Անթիլիաս ժամանելու ճանապարհին՝ «Միջերկրականի վրայ», հանդես է գալիս մի հոդվածով, որ կրում էր «Դէպի Էջմիածին» խորագիրը: Այդ հոդվածում, որը լայնորեն տարածվեց ժամանակի սփյուռքյան մամուլում, վերջինս կրկին ընդգծում է, որ, որպես Կիլիկիո կաթողիկոս, մտադիր է մի քանի եպիսկոպոսների հետ մասնակցել Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրություններին: Նա նշում է, որ պետք է հնարավորինս մեծ պատվիրակությունով մեկնել Հայաստան, տեսնել հայրենիքի վերաշինությունն ու ձեռքբերումները: Գարեգին վեհափառը հոդվածում հորդորում է նաև հայոց եկեղեցու արտասահմանյան թեմերին և հայրենիք մեկնող պատվիրակներին՝ իրենց նյութական աջակցությունը բերել ոչ բարվոք վիճակում գտնվող Մայր Աթոռին: Գարեգին սրբազանն այդ այցը համարում է կարևոր հայրենիքի հետ կապի ամրապնդման տեսակետից: «Նոքա կզգան եւ կտեսնեն մեր եղբայրական կապը ազգի ամբողջութեան հետ, որի արմատն ու բունը հայրենիքի հայութիւնն է: ...Ուրեմն, դէպի Հայաստան և Էջմիածին, որքան կարելի է մեծ թուով»[45],- ահա այս հորդորով է Գարեգին Հովսեփյանն ավարտում իր հոդվածը: Այդ հոդվածը հստակ ուղերձ էր բոլոր տատանվողներին և հատկապես դեմ հանդես եկողներին, ովքեր փորձում էին ձախողել Գարեգին Հովսեփյանի մասնակցությունը Էջմիածնում հրավիրվելիք ազգային-եկեղեցական ժողովին: Իրականում Սփյուռքում բոլորը չէ, որ համամիտ էին Գարեգին Հովսեփյանի՝ Հայաստան մեկնելու մտքի հետ: «Եղան խորհուրդ տվողներ, որ տեղից չշարժուիմ, բայց հաստատ մնացինք Մեր որոշման մէջ եւ ուրախ եմ դորա համար»[46],- այդ մասին Գարեգին Ա-ն խոստովանում է Արշակ Չոպանյանին՝ Էջմիածին կատարած իր այցից հետո՝ 1945 թ. օգոստոսին:

Կիլիկիո նորընտիր գահակալն ավելի քան վճռական էր տրամադրված: Այս ամենը ցույց է տալիս, որ Մայր Աթոռի նախկին միաբանը, Կիլի-

[44] «Էջմիածին», Ս. Էջմիածին, հունիս, 1944, N 6, էջ 20-21:
[45] Տե՛ս «Հասկ», մարտ-ապրիլ, 1945, N 3-4, էջ 54-55:
[46] Գարեգին Ա. Յովսեփեան. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1943-1952), հատոր Բ, Փաստաթուղթերու եւ նիւթերու ժողովածու, Անթիլիաս, 2017, կազմող՝ **Գ. Աւագեան**, էջ 175:

կիո կաթողիկոս ընտրվելով, որոշել էր նոր որակ հաղորդել Էջմիածին-Անթիլիաս հարաբերություններին, որոնք իրենց բնույթով, հիրավի, կարող են որակվել որպես աննախադեպ: Գարեգին սրբազանն իր այդ տեսակետները, ըստ էության, չփոխեց նաև Անթիլիաս ժամանելուց և Կիլիկիո գահակալ օծվելուց հետո:

Դեռևս 1944 թ. վերջին Գևորգ արք. Չորեքչյանը հեռագրել էր Անթիլիաս և տեղեկացրել, որ ազգային-եկեղեցական ժողովը նախատեսվում է անցկացնել հաջորդ տարվա գարնանը: Նա միաժամանակ հանձնարարում է կատարել եկեղեցական և աշխարհիկ պատվիրակների ընտրություն և Մայր Աթոռ ուղարկել նրանց անունները Խորհրդային Միության մուտքի արտոնագրի հարցերը կարգավորելու նպատակով[47]:

1945 թ. փետրվարի 6-ին թվագրված նամակով Գևորգ արք. Չորեքչյանը Գարեգին Հովսեփյանին պաշտոնապես հրավիրում է մասնակցելու ազգային-եկեղեցական՝ առաջիկայում հրավիրվելիք ժողովին: Այս նամակն Անթիլիաս է հասնում մարտի 22-ին՝ Գարեգին կաթողիկոսի՝ Ամերիկայից Անթիլիաս ժամանելուց մեկ օր առաջ[48]: Նամակում ընդգծվում էր ազգային-եկեղեցական ժողովին Գարեգին վեհափառի անձամբ մասնակցության անհրաժեշտությունը, որպեսզի՝ «գաղութահայութիւնը իր լրիւ ձայնով մասնակցի յիշեալ ժողովին»[49]:

1945 թ. փետրվարի 13-ին Անթիլիասում գումարվում է Ազգային ընդհանուր ժողով և որոշվում է ընտրել աշխարհիկ և եկեղեցական պատվիրակներ ազգային-եկեղեցական ժողովին մասնակցելու համար: Այդ ժողովին Կիլիկիո Աթոռի հոգևորական ներկայացուցիչներ են ճանաչվում Կիլիկիո թեմերի՝ 1925 թ. կանոնադրության հիման վրա իրավասու թեմական առաջնորդներն ու եպիսկոպոսները:

Կիլիկիո կաթողիկոսության բնակչության թվակազմի համամասնությամբ ընտրվում են նաև աշխարհական յոթ պատգամավորներ՝ Մկրտիչ Մսըրլյանը, Գրիգոր Ազիրյանը, Գևորգ Պապոյանը, Տաճատ Սրապյանը, Եփրեմ Էլլէզյանը, Միսաք Վահունին և Արշակ Գալեմքերյանը: Որոշվում է նաև ազգային-եկեղեցական ժողովի օրակարգը ստանալուց հետո Կենտրոնական վարչության հետ միասին «խորհրդակցաբար իւրաքանչիւր խնդրի մասին հաւանական տեսակէտ բանաձեւեն....»: Այդ պարագան,

---

[47] Տե՛ս «Հասկ», Անթիլիաս, նոյեմբեր-դեկտեմբեր, 1944, N 11-12, էջ 172:

[48] Տե՛ս **Եղիայեան Բ.**, Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1975, էջ 575-576:

[49] **Եղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 576:

սակայն, «Հասկ»-ի բնութագրմամբ. «չի կաշկանդեր ոեւէ պատգամաւորի մը կարծիքի և խղճի ազատութիւնը»[50]: Նույն թվականի հունիսի սկզբներին Գարեգին վեհափառն այդ մասին տեղեկացնում է Չորեքչյան սրբազանին: Այդ նամակում նշված էր աշխարհիկ պատգամավորների ութ անուն. նախկին ցանկի յոթ անուններին ավելացված էր նաև Նազարեթ Յաղուբյանի անունը: Իսկ, որպես եկեղեցական պատգամավորներ, հիշատակվում էին Լիբանանի կաթողիկոսական փոխանորդ Արտավազդ արք. Սուրմեյանը, Դամասկոսի թեմի կաթողիկոսական փոխանորդ Եփրեմ արք. Տոհմունին և Բերիո առաջնորդ Զարեհ ծ. վարդապետ Փայասլյանը[51]:

Սփյուռքյան թերթերը դրական էին գնահատում Էջմիածին-Անթիլիաս հարաբերությունների ջերմացման այս գործընթացը և ողջունում Գարեգին Ա. Հովսեփյանի որոշումը Ամենայն հայոց կաթողիկոսական ընտրություններին մասնակցելու վերաբերյալ[52]:

1945 թ. ապրիլին[53] Գարեգին Ա Հովսեփյանը հրապարակում է իր անդրանիկ կոնդակը[54], որտեղ հերթական անգամ, սակայն՝ արդեն պաշտոնապես, անդրադառնում է նաև Մայր Աթոռին և Կիլիկիո կաթողիկոսության՝ վերջինիս հետ ունեցած հարաբերություններին: Կոնդակում կաթողիկոսը պաշտոնապես հայտնում է իր ցանկությունը՝ մասնակից լինելու Ամենայն հայոց կաթողիկոսի նախատեսվող ընտրություններին: «Թէպէտ ի վաղնջուց հետէ հաստատեալ է Աթոռ Տանն Կիլիկիոյ եւ յարատեւի դարուց ի դարց, բայց չէ այդ արգելք միութեան Հայաստանեայցս Եկեղեցւոյ ըստ վարդապետականին եւ աւանդութեանց, ըստ ծեսից եւ ընդհանուր նպատակաց: Մանաւանդ, գալով Մեր միաբան եւ հոգեւոր զաւակ Ս. Էջմիածնի, բաղձանք Մեր է սատար լինել ըստ կարողութեան եւ ըստ հնարաւորութեան, պայծառութեան Ս. Աթոռոյդ եւ Հայրապետին, որում եւ տացէ Տէր նստիլ յԱթոռդ այդ նուիրական: Յայս միտս կամիմք ի սրտէ մասնակից լինել ընտրութեան Աթոռակալին Մեծի Տանդ եւ բերել

[50] Տե՛ս «Հասկ», Անթիլիաս, հունվար-փետրվար, 1945, N 1-2, էջ 34:

[51] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 264, թ. 14, տե՛ս նաև՝ Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Զ, էջ 267-268:

[52] Տե՛ս «Զարթոնք», Պէյրութ, 25 մարտի, 1945, N 1408, «Ժողովուրդի ձայն», 25 մարտի 1945, N 845 և այլն:

[53] Գարեգին Ա. Հովսեփյանի անդրանիկ կոնդակի վրա ամսաթիվ չկա:

[54] Տե՛ս Գարեգին Ա. Յովսեփեան. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1943-1952), հատոր Բ, էջ 655-659: Տե՛ս նաև՝ «Հասկ», Անթիլիաս, N 3-5, մարտ-ապրիլ, 1945, N 3-4, էջ 40-43:

զջան Մեր եւ զգործակցութիւն յԱզգային-եկեղեցական ժողովին»[55],-ասված էր կոնդակում:

1945 թ. ապրիլի վերջին Գարեգին վեհապետը Գևորգ սրբազանին հղած նամակում գրում էր. «Արտասահմանում եղած Մեր ամբողջ ժամանակը, որ գաղութում եղել ենք՝ Բաղդատից մինչեւ Կալիֆորնիա, բանախօսութիւններով, յօդվածներով եւ քարոզներով աշխատել ենք սէր եւ համակրութիւն զարթնեցնել դէպի Մայր Աթոռն ու վերածնուող Խորհրդային Հայաստանը....», ապա շարունակում. «Մեր ընտրութեան օրերից բազմիցս առիթ ենք ունեցել բերանացի եւ գրաւոր յայտնելու, թէ Մեր ի սրտէ ցանկութիւնն է մասնակից լինել Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութեան՝ դորանով շեշտելով Հայաստանեայց Եկեղեցու միասնականութիւնը»[56]: Նույն նամակում Գարեգին Հովսեփյանը նշում է. «Մենք մեծ յոյս եւ հաւատ ունինք, որ Էջմիածնում գումարուելիք Ազգային-եկեղեցական ժողովը իւր շատ լաւ հետեւանքները պիտի ունենայ արտասահմանի հայութիւնը սերտ կապելու Էջմիածնի եւ Խ. Հայաստանի հետ»: Այդ նամակում Գարեգին վեհափառն անդրադառնում է նաև Մայր Աթոռին նյութական աջակցություն տրամադրելու հարցերին. «Ամերիկայում, Եգիպտոսում Երուսաղէմում եւ Մեր թեմերու մէջ թելադրել ենք դատարկաձեռն չերեւալ Մայր Աթոռում, նպաստել ոչ միայն ընտրութեան հետ կապուած ծախսերի թեթեւացմանը, այլեւ տալ զգալի գումար Ճեմարանի բացման եւ այլ կարիքների համար»[57]:

Դատելով փաստերից՝ Գարեգին Ա Հովսեփյանն ի սրտե ցանկանում էր ոչ միայն ուղղակի մասնակցություն ունենալ կաթողիկոսական ընտրություններին, այլև անում էր իրենից կախված ամեն ինչ այդ ընտրությունների հաջող ընթացքի համար: Մասնավորապես՝ վերջինս արեց ամեն ինչ, որպեսզի ընտրություններին մասնակցեն բավարար թվով եպիսկոպոսներ՝ խուսափելու 1941 թ. ազգային-եկեղեցական ժողովում ի հայտ եկած խնդիրներից և ապահովելու նորընտիր կաթողիկոսի օծման կարգի պատշաճ անցկացումը: «Եթէ մեզ հետ լինեն նաեւ Ռուբէն, Ներսէս եւ Մազլըմեան արքեպիսկոպոսները՝ ինը եպիսկոպոսի ներկայութիւնը Կիլիկիոյ կաթողիկոսի հետ միանգամայն բաւարար են ոչ միայն եկեղեցական, այլեւ արտաքին փառավորութեան տեսակէտով՝ նորընտիր Ամենայն Հա-

[55] Գարեգին Ա. Յովսեփեան. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1943-1952), հատոր Բ, էջ 656:
[56] Նույն տեղում, էջ 152:
[57] Նույն տեղում, էջ 152-153:

յոց կաթողիկոսի օծումը նուիրագործելու»[58],- ժողովից առաջ Գևորգ արք. Չորեքչյանին գրում էր Գարեգին Հովսեփյանը:

Որոշումը կայացված էր, կաթողիկոսական այս ընտրությանն առաջին անգամ մասնակցելու էր Կիլիկիո կաթողիկոսությունը՝ իր գահակալի գլխավորությամբ, որին ուղեկցելու էին նաև եպիսկոպոսներ և Կիլիկիո թեմերից ընտրված աշխարհիկ պատգամավորներ:

1945 թ. ապրիլի 27-ին Գարեգին վեհափառը հրապարակում է հատուկ կոնդակ Էջմիածին մեկնելու առթիվ[59], ըստ որի՝ Կիլիկիո Աթոռը ազգային-եկեղեցական ժողովին ներկայանալու էր յոթ պատվիրակներով[60], որոնց թվում, բացի Գարեգին Ա. Հովսեփյանից, ընդգրկված էին Արտավազդ Սուրմեյան և Եփրեմ Տոհմունի արքեպիսկոպոսները և աշխարհիկ չորս պատգամավորներ՝ Մկրտիչ Մսրլյանը, Գևորգ Պապոյանը, Եփրեմ Էլլէզյանը և Արշակ Գալեմքերյանը[61]: Ինչպես տեսնում ենք՝ որոշակի փոփոխություններ էին կատարվել պատվիրակության կազմում, մասնավորապես՝ կրճատվել էր աշխարհիկ պատգամավորների թիվը: Նույն կոնդակից պարզ է դառնում, որ պատվիրակության կազմում ընդգրկված է եղել նաև Բերիո թեմի առաջնորդ Զարեհ ծ. վրդ. Փայասլյանը, սակայն վերջինս ինչ-ինչ պատճառներով այդպես էլ Հայաստան չի ժամանում[62]: Որպես գավազանակիր՝ պատվիրակութան կազմում էր նաև Դերենիկ վրդ. Փոլադյանը:

Խադ արք. Աջապահյանը չի ընդգրկվում պատվիրակության կազմում, Գարեգին Հովսեփյանի խոսքով՝ «վանքն ու թեմերը առանց ղեկավարի չթողնելու համար»[63]: Գարեգին Ա-ի մեկ այլ կոնդակով՝ Հայաստան կատարած իր ուղևորության շրջանում նա նշանակվում է որպես կաթողիկոսական փոխանորդ[64]:

Կիլիկիո կաթողիկոսության պատվիրակությունն Անթիլիասից դուրս է գալիս 1945 թ. հունիսի 5-ին: Պատվիրակությունը Պաղեստինից ինքնաթիռով ժամանում է Թեհրան, այնտեղից՝ Թավրիզ, այնուհետև գնացքով՝

[58] Նույն տեղում, էջ 153:
[59] Տե՛ս նույն տեղում, էջ 154: «Հասկ», Անթիլիաս, հունիս-հուլիս, 1945, N 6-7, էջ 134:
[60] Ազգային-եկեղեցական ժողովի պատվիրակ էր ընտրվել նաև Սիրիայի խորհրդարանի պատգամավոր Նազարեթ Յաղուբյանը, որը սակայն ճանապարհային դժվարությունների պատճառաբանությամբ չի ժամանում Հայաստան:
[61] Տե՛ս «Հասկ», Անթիլիաս, օգոստոս-հոկտեմբեր, 1945, N 8-10, էջ 169:
[62] Տե՛ս Գարեգին Ա. Յովսեփեան. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1943-1952), հատոր Բ, էջ 668:
[63] Նույն տեղում, էջ 154:
[64] Տե՛ս նույն տեղում, էջ 668-669:

սահմանային Ջուղա, իսկ հունիսի 10-ին՝ Երևան, որտեղից էլ՝ Էջմիածին[65]: Պատվիրակությանն Իրանի տարածքում ուղեկցում էր Թեհրանում Խորհրդային Միության դեսպանության կցորդ, պետ. անվտանգության մարմնի աշխատակից Մարտիրոս Մելքումյանը: Երևանում պատվիրակությանը դիմավորում է Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սուրեն Հովհաննիսյանը[66]: Ճամփորդության ընթացքում ժողովուրդը մեծ խանդավառությամբ էր դիմավորում Գարեգին Ա-ին և վերջինիս գլխավորած պատվիրակությանը[67]:

Այսպիսով, Կիլիկիո կաթողիկոսության պատվիրակությունը, կաթողիկոս Գարեգին Ա-ի գլխավորությամբ, հայրենիքում էր և առաջին անգամ մասնակցելու էր Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրություններին:

4. 1945 թ. ազգային-եկեղեցական ժողովը. նոր փուլ Էջմիածին-Անթիլիաս հարաբերություններում

Ազգային-եկեղեցական ժողովի հոգևորական պատգամավորների հիմնական կազմի Մայր Աթոռ ժամանելուց հետո մեկնարկեցին ժողովի նախապատրաստական աշխատանքները[68]: Այդ նպատակով 1945 թ. հունիսի 13-15-ը Մայր Աթոռում տեղի է ունենում Էջմիածին ժամանած թեմակալ առաջնորդների և փոխթեմակալների նախապատրաստական խորհրդակցական ժողով, որը նպատակ ուներ մշակել և հնարավորինս ընդհանրացնել մոտեցումները ազգային-եկեղեցական ժողովում քննարկվելիք հարցերի վերաբերյալ: Ուստի այդ ժողովի օրակարգի հիմնական հարցերից մեկն է դառնում՝ «Ստեղծել և ունենալ միասնական մոտեցում Ազգային-եկեղեցական ժողովի օրակարգում դրված և քննության ենթակա բոլոր հարցերի վերաբերմամբ»[69]: Այդ ժողովը քննարկում է նաև Մայր Աթոռի նյութական ապահովության հետ կապված հարցը և միաձայն որոշում.

«1. Մայր Աթոռին ենթակա թեմերում գտնվող եկեղեցիների եկամուտների 5 տոկոսը հատկացնել Ս. Էջմիածնին: 2. Վարդավառի, Ս. Ծննդի և

---

[65] Տե՛ս «Հասկ», Անթիլիաս, հունիս-հուլիս, 1945թ., N 6-7, էջ 168: ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 3, թ. 5:
[66] «Սովետական Հայաստան», Եր., 16 հունիսի 1945, N 120:
[67] Տե՛ս «Հասկ», օգոստոս-հոկտեմբեր, 1945, N 8-10, էջ 168-169:
[68] Նշենք, որ Ազգային-եկեղեցական ժողովի կազմակերպական շատ հարցեր, պատգամավորների դիմավորման և տեղավորման գործընթացը մանրամասն համակարգվում էր նաև Հայ եկեղեցու գործերի խորհրդի կողմից, տե՛ս ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 1, թթ. 1-23:
[69] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 310, թ. 2:

Ջատկի տոներին գանձանակ պտտեցնել յօգուտ Մայր Աթոռի»: 3. Կանոնավորել «Էջմիածնի լումա» գանձանակի գործածությունը և այն բոլոր թեմերի եկեղեցիներում դարձնել պարտադիր»[70]:

Նախապատրաստական ժողովի վերջին՝ հունիսի 15-ին տեղի ունեցած 4-րդ նիստում, անդրադարձ է կատարվում մի կարևոր հարցի ևս՝ «Ազգային-եկեղեցական ժողով գումարելու կանոնադրությանը»: Կետ առ կետ քննարկելուց և առաջարկված մի շարք փոփոխություններից հետո քվերակվում է նաև այս կանոնադրությունը[71]: Առաջարկվող փոփոխություններից մի քանիսը վերաբերում էին 1925 թ. ստեղծված կանոնադրության մեջ տեղ գտած ձևակերպումներին, որոնք ժամանակին որոշակի դժգոհություններ էին առաջացրել Կիլիկիո կաթողիկոսության մոտ: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում էր կանոնադրության 10-րդ կետին, որտեղ Կիլիկիո կաթողիկոսության անունը նշված չէր: Այդ կետը սահմանում էր, որ Ազգային-եկեղեցական ժողովի անդամ են հանդիսանում Ս. Էջմիածնի, և Ս. Երուսաղեմի միաբանությունների և Կ. Պոլսի Խառը ժողովի կողմից ընտրված մեկական ներկայացուցիչներ[72]: Այդ մասին Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Խապայանը ժամանակին հայտնել էր իր դժգոհությունը[73]: Սա, մեր կարծիքով, թյուրիմացության արդյունք էր, որը ժամանակին որոշակի թյուրըմբռնումների տեղիք էր տվել երկու աթոռների միջև: Եթե որևէ միտում լիներ Կիլիկիո կաթողիկոսության անունը չնշելու հարցում, ապա նույն կանոնադրության 5-րդ, 6-րդ և 9-րդ հոդվածներում ևս Կիլիկիո կաթողիկոսության անվանումը պատշաճ ձևով նշված չէր լինի: Արդեն կանոնադրության նոր խմբագրության մեջ խնդիրը շտկվում է, և 10-րդ կետում ավելացվում է Կիլիկիո կաթողիկոսության անվանումը[74]:

Առաջ անցնելով նշենք, որ արդեն Ազգային եկեղեցական ժողովն իր երկրորդ նիստում «մի քանի փոփոխութիւններով» վերջնական հաստատում է «Ազգային եկեղեցական ժողով գումարելու վերաբերյալ հատուկ կանոնադրությունը»[75]:

Ազգային եկեղեցական ժողովի մեկնարկը տրվում է 1945 թ. հունիսի 16-ին և շարունակվում մինչև հունիսի 25-ը՝ ունենալով յոթ նիստեր[76]:

---

[70] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 310, թ. 7:
[71] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 310, թ. 11-13:
[72] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 49, թ. 2:
[73] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4469, թ. 3:
[74] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 317, թ. 2:
[75] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 318, թ. 9: Այդ կանոնադրության օրինակը տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ.317, թ.1-2:
[76] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 318, թ. 6-24:

Առաջին նիստին ներկա էին 102 պատգամավորներ, որոնցից 28-ը՝ հոգևորական և 74-ը՝ աշխարհական[77]: Հետագա նիստերին պատգամավորների թիվն ավելանում է՝ հասնելով 106-ի[78], հետո՝ 121-ի[79], այդ թվում՝ 34 հոգևորականներ և 87 աշխարհականներ[80]: Պատգամավորներից 47-ը ներկայացնում էին հայոց եկեղեցու արտասահմանյան աթոռներն ու թեմերը[81]: Նշենք, որ արտասահմանից ժամանող 11 պատգամավորներ, որոնք ներկայացնում էին Պոլսո հայոց պատրիարքությունը և Հարավային Ամերիկայի թեմը, Մայր Աթոռ են հասնում Ազգային եկեղեցական ժողովի ավարտից հետո, սակայն իրենց ձայներով միանում են քվեարկության արդյունքներին[82]:

Պատգամավորների թվում էին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյանը, Երուսաղեմի հայոց պատրիարք Կյուրեղ Բ Իսրայելյանը, Կ. Պոլսի պատրիարքի տեղապահ Գևորք արք. Արսլանյանը: Սա աննախադեպ երևույթ էր, երբ Ազգային եկեղեցական ժողովին հայոց եկեղեցու բոլոր նվիրապետական աթոռների գահակալները ներկա էին անձամբ և ոչ թե՝ իրենց ներկայացուցիչների միջոցով: Բացի հայոց եկեղեցու՝ Խորհրդային Միության տարածքում գործող թեմերից, ներկա էին նաև արտասահմանյան թեմերի՝ Ատրպատականի, Իրանա-Հնդկաստանի, Թեհրանի, Եգիպտոսի, Բելգիայի, Ռումինիայի, Եվրոպայի թեմական առաջնորդները, աշխարհիկ և հոգևոր պատգամավորներ տարբեր թեմերից[83]:

Ազգային-եկեղեցական ժողովին նախորդող շաբաթների ընթացքում հայոց եկեղեցու բոլոր թեմերում, Մայր Աթոռի միաբանությունում տեղի էին ունենցել պատգամավորների ընտրություններ[84]: Ժողովին մասնակ-

---

[77] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 318, թ. 4-6, գ. 311, էջ 5:

[78] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 318, թ. 15, շրջերես: «Էջմիածին», Ս. Էջմիածին, հունիս-հուլիս,1945, N 6-7, էջ 35:

[79] Արխիվային մեկ այլ փաստաթղթի համաձայն՝ պատգամավորների թիվը եղել է 118: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 823, ց. 6, գ. 8, թթ. 3-7:

[80] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 312, թ. 30-31, շրջերես, **Գարեգին արք. Խաչատուրյան**, Ձեկոյց Մայր-Աթոռի եւ Մայր-Հայրենիքի մասին ի Ս. Էջմիածին գումարուած ազգային-եկեղեցական ժողովին առիթով, Տրուած Հարաւ. Ամերիկահայոց Կաթ. պատուիրակ եւ պատգամաւոր Տ. Գարեգին արքեպիսկոպոսի կողմէ,Պ. Այրէս (Բուենոս Այրես), 1946, էջ 15: Դերենիկ վարդապետը «Հասկ»-ում նշում է, որ ժողովին մասնակից 121 պատգամավորից հոգևորականներ էին 36-ը, իսկ աշխարհական՝ 85-ը, տե՛ս «Հասկ», Ամթիլիաս, օգոստոս-հոկտեմբեր, 1945, N 8-10, էջ 170:

[81] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 4, թթ. 23-33, ց. 3, գ. 3, թ. 5:

[82] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 3, թ. 5:

[83] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 311, թ. 5:

[84] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 301, թ. 1-11:

ցող աշխարհիկ պատգամավորները նիստից առաջ սովորաբար հանդես են գալիս երդումով[85]: 1945 թ. Ազգային-եկեղեցական ժողովին մասնակից աշխարհիկ պատգամավորները ստորագրել էին «Թուղթ երդմանը»[86]:

Ժողովի բացմանը ներկա էին նաև ԽՍՀՄ Ժողկոմսովետին կից կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահ Ի. Պոլյանսկին և Խորհրդային Հայաստանի Ժողկոմսովետին կից Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Հովհաննիսյանը[87]:

Նշենք, որ ազգային-եկեղեցական ժողովին, որպես հյուր, ներկա է լինում նաև Անգլիկան եկեղեցու ներկայացուցիչ, Քենտրբերյան տաճարի վանահայր Հ. Ջոնսոնը*: Կաթողիկոս Գևորգ Ջ Չորեքչյանը վերջինիս պարգևատրում է հայոց եկեղեցու բարձրագույն պարգևով՝ «Գրիգոր Լուսավորիչ» 1-ին աստիճանի շքանշանով: Վերջինս մի շարք հայանպաստ ելույթներ է ունենում՝ բարձրացնելով սփյուռքահայերի արդարացի պահանջը Թուրքիայի կողմից բռնազավթված հողերը Խորհրդային Հայաստանին միացնելու վերաբերյալ: Վերջինս հանդես է գալիս նաև խորհրդային և անգլիական մամուլում[88]:

Ազգային-եկեղեցական ժողովի բացման իր ելույթում Գևորգ արք. Չորեքչյանը նշում է, որ «Ազգային եկեղեցական ժողովը գումարվում է Համամիութենական եւ Համազգային նշանակութիւն ունեցող երկու խոշոր երեւոյթների համընթաց, որոնք են Հայրենական Մեծ պատերազմի յաղթական աւարտումը եւ Ս. Էջմիածնի վերակառուցման փաստը»: Վերջինս Ազգային եկեղեցական ժողովը համեմատում է 1441 թ. գումարված ժողովի հետ, երբ Մայր Աթոռը Կիլիկիայից տեղափոխվեց Ս. Էջմիածին: «Այժմ էլ սկսում է Աթոռի երկրորդ վերակենդանութեան շրջանը»[89],- ընդգծում էր կաթողիկոսի տեղապահը: Իր կարճ ելույթում Գևորգ սրբազանը հատուկ ողջունում է կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյանին և պատրիարք Կյուրեղ ծ. վարդապետ Իսրայելյանին[90], ովքեր «իրենց մաս-

[85] Տե՛ս «Սիոն», Երուսաղէմ, մայիս-օգոստոս, N 5-8, 1945, էջ 77:
[86] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 301, թ. 1-2:
[87] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 318, թ. 6:
* Խոսքը Հյուլեթ Ջոնսոնի (Hewlett Johnson, 1874-1966) մասին է:
[88] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 19, թ 8:
[89] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 313, թ. 1-2:
[90] Ազգային եկեղեցական ժողովից հետո Երուսաղեմի հայոց պատրիարք Կյուրեղ Բ-ն, որն ուներ ծ. վարդապետի աստիճան, մի շարք այլ հոգևորականների հետ ձեռնադրվում է եպիսկոպոս, ապա նաև ստանում արքության աստիճան, Տե՛ս «Սիոն», Երուսաղէմ, մայիս-օգոստոս, N 5-8, 1945, էջ 76:

նակցութեամբ շեշտում են Հայ Եկեղեցու միասնականութիւնը եւ եկել են օգնելու ժողովի յաջողութեանը»[91]:

Նիստերի բացումը կատարում է Գևորգ սրբազանի կողմից հրավիրված Գարեգին վեհափառը՝ աղոթքով: Վերջինս հրավիրվում է նաև նախագահելու Ազգային եկեղեցական ժողովը[92]: Սա բացառիկ և աննախադեպ իրադարձություն էր հայոց եկեղեցու պատմության մեջ: Իր բացման խոսքում Գարեգին վեհափառը հայտարարում է. «Այս ժողովը արտաքոյ կարգի երեւոյթ է մեր պատմութեան մէջ, որ աշխարհի ամէն կողմերից հաւաքուել ենք ոչ միայն ընտրելու Կաթողիկոսը, այլեւ նիւթապէս ու բարոյապէս սատար հանդիսանալու Ս. Էջմիածնի բարգաւաճմանը»[93]: «Այս ժողովը մեր եկեղեցու և ժողովրդի ազգային միասնութեան ժողովն է»[94],- այնուհետև հայտարարում է Գարեգին վեհափառը: Ողջույնի խոսքով հանդես են գալիս նաև Ի. Պոլյանսկին և Ս. Հովհաննիսյանը[95]: Առաջին նիստում Ազգային եկեղեցական ժողովի հետագա նիստերի կազմակերպման համար ընտրվում են նաև ատենակալության, քարտուղարության և մանդատային հանձնաժողովի անդամներ[96]:

Ազգային եկեղեցական ժողովի՝ հունիսի 18-ին տեղի ունեցած երկրորդ նիստում ընթերցվում և հաստատվում է ժողովի կողմից Ստալինին հղված հեռագրի տեքստը[97]:

Այդ նիստում Գևորգ արք. Չորեքչյանը ներկայացնում է հայոց եկեղեցու բարձրագույն իշխանության՝ 1941 թ. ապրիլի 10-ից մինչև 1945 թ. գործունեության վերաբերյալ զեկույց[98]: Գևորգ սրբազանը, ըստ էության, իր զեկույցում մատնանշում է այն հիմնական խնդիրները, որոնք պետք է քննարկեր Ազգային եկեղեցական ժողովը: Նա հատկապես ընդգծում է հայոց եկեղեցու Սահմանադրություն ունենալու անհրաժեշտությունը, եկեղեցու բարեկարգության հարցը, անդրադառնում է Գևորգյան հոգևոր ճեմարանի բացման, Մայր տաճարի վերանորոգության, Մայր Աթոռի նյու-

---

[91] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 313, թ. 2:

[92] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 318, թ. 7, գ. 311, թ. 6: Տե՛ս նաև՝ «Էջմիածին», Ս. Էջմիածին, հունիս-հուլիս,1945, էջ 29:

[93] **Եղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 577:

[94] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 318, թ. 7, շրջերես, գ. 311, թ. 7:

[95] Տե՛ս «Սովետական Հայաստան», Եր., 17 հունիսի 1945, N 121:

[96] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 311, թթ. 7-9:

[97] Արձանագրություններ Ազգային-եկեղեցական ժողովի (16 հունիսի 1945 թ. ի Ս. Էջմիածին), Եր., 1946, էջ 12-13:

[98] Տե՛ս Զեկուցում Ս. Էջմիածնի հոգեւոր իշխանութեան իր քառամեայ գործունեութեան մասին (1941-1945), ա. թ.: ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 318, թ. 8, շրջերես, գ. 315, թ. 1, գ. 335, թթ. 1-11:

թական ապահովության, «Ս. Էջմիածնի երկրորդ վերածննդեան», այն է՝ Մայր Աթոռը Էջմիածին տեղափոխելու 500-ամյակը նշելուն և մի շարք այլ հարցերի: Իր խոսքում Գևորգ սրբազանը հատկապես շեշտադրում է այն կարևոր ձեռնարկները, որոնք նախատեսվում են կյանքի կոչել առաջիկայում: Հատուկ շեշտադրվում են խորհրդային իշխանությունների հետ ձեռք բերված մի շարք կարևոր պայմանավորվածություններ եկեղեցական կալվածքների, մի շարք վանքերի՝ Մայր Աթոռին վերադարձնելու, 1946 թ. նախատեսվող մյուռոնօրհնեքի արարողությանը արտասահմանից ժամանող ուխտավորների համար Հայաստան մուտքի թույլտվության դյուրացման և մի շարք այլ հարցերի շուրջ[99]:

Զեկույցում Գևորգ Չորեքչյանն անդրադառնում է նաև Էջմիածին-Անթիլիաս հարաբերություններին և, որպես այդ հարաբերությունների ջերմացման ապացույցներ՝ մատնանշում 1932 թ. Էջմիածնում գումարված Ազգային եկեղեցական ժողովին Կիլիկիո կաթողիկոսության և նրա հինգ թեմերի մասնակցության հրավերը՝ «...նույն իրավունքներով, ինչ իրավունքներով մասնակցում են էջմիածնական թեմերը»[100], ինչպես նաև Էջմիածնի պատվիրակների մասնակցությունը Անթիլիասում տեղի ունեցած կաթողիկոսական ընտրություններին[101]: Սրբազանն իր գոհունակությունն է հայտնում Կիլիկիո գահակալին՝ նրան համարելով «էջմիածնական» եպիսկոպոս, որն «...իր ամբողջ կյանքում սիրել է ու սիրում է միասնական հայ եկեղեցին և հայ ժողովուրդը...»[102]:

Նույն նիստին Գարեգին վեհափառը, որպես հայոց եկեղեցու «միասնականութեան և միութեան հասկացողութեան» ապացույց, ընդգծում է իր մասնակցությունն Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրություններին՝ միաժամանակ կատարելով հետաքրքրական առաջարկ՝ Հայաստանեայց եկեղեցու բոլոր եկեղեցիներում, պատարագի ժամանակ, Ամենայն հայոց կաթողիկոսի անվան հետ, մյուս նվիրապետական աթոռների գահակալ-

[99] Տե՛ս Զեկուցում Ս. Էջմիածնի հոգեւոր իշխանութեան իր քառամեայ գործունեութեան մասին (1941-1945), ա. թ., էջ 6-20:

[100] «Էջմիածին», Ս. Էջմիածին, օգոստոս-հոկտեմբեր, 1945, N 8-10, էջ 13:

[101] Խոսքը վերաբերում է 1941 թ. Անթիլիասում անցկացված կաթողիկոսական ընտրություններին, որին Ս.Էջմիածինը և Խորհրդային Հայաստանը ներկայացնում էին երկու պատվիրակներ՝ Արսեն արք. Ղլտճյանը և Համբարձում Առաքելյանը: Այդ ընտրություններին չի հաջողվում ընտրել Կիլիկիո նոր կաթողիկոս: Այդ մասին տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4496, թ. 4-5, 7, 12: «Հասկ», Անթիլիաս, նոյեմբեր-դեկտեմբեր, 1941, N 11-12, էջ 169:

[102] «Էջմիածին», Ս. Էջմիածին, օգոստոս-հոկտեմբեր, 1945, N 8-10, էջ 13:

ների անունների հիշատակման վերաբերյալ[103]: Նշենք, որ մինչ այդ Մայր Աթոռին պատկանող թեմերում չէր հիշատակվել Կիլիկիո կաթողիկոսի անունը և նույնպես Կիլիկիո կաթողիկոսության ենթակա թեմերում չէր հիշատակվել Ամենայն հայոց կաթողիկոսի անունը: Պատարագներում երբևէ չէր հիշատակվել նաև հայոց պատրիարքների անունները: Իր խոսքի վերջում վեհափառն օրհնում է. «համերաշխութեան և փոխադարձ հասկացողութեան այս ոգին, որպէս զի մեր մեծ կործանումից յետոյ վերածնութեան և վերակազմութեան մղիչ ոյժ դառնայ այն Եկեղեցու և Հայրենիքի համար»[104]:

Դեռևս հունիսի 13-15-ը Ազգային եկեղեցական ժողովի նախապատրաստական նիստերից մեկի ժամանակ Գևորգ արք. Չորեքչյանը, անդրադառնալով ակադեմիկոս Ստեփան Մալխասյանի՝ «Էջմիածին» ամսագրում տպագրած հոդվածներից մեկում հնչեցված մտքին՝ ժողովին առաջարկում է մեծ շուքով տոնել Մայր Աթոռի՝ Կիլիկիայից Ս. Էջմիածին վերադարձի 500-ամյակը, ինչպես որ տոնվել էին գրերի գյուտի, Աստվածաշնչի թարգմանության հոբելյանները[105]: Այդ պատմական իրադարձության 500-ամյակը լրացել էր 1941 թ., բայց Երկրորդ աշխարհամարտը հնարավորություն չէր ընձեռել անդրադառնալ այդ հիշարժան իրադարձությանը:

Ազգային եկեղեցական ժողովին որպես պատգամավոր մասնակցող ակադեմիկոս Ստ. Մալխասյանն իր հերթին կրկնում է սեփական առաջարկը[106], որը «միաձայն» ընդունվում է ժողովականների կողմից: Տոնակատարության «գաղափարը ձևակերպելու և ծրագիրը կազմելու համար» ընտրվում է երեք հոգանոց հանձնաժողով՝ Գարեգին Ա Հովսեփյանի, Երուսաղեմի պատրիարք Կյուրեղ Բ-ի և Բեյրութի թեմի առաջնորդ Արտավազդ արք. Սուրմեյանի մասնակցությամբ[107]:

Հունիսի 19-ին տեղի ունեցած երրորդ նիստում Գարեգին վեհափառը հատուկ զեկույցով հանդես է գալիս այդ հոբելյանը պատշաճ նշելու անհրաժեշտության վերաբերյալ: Վերջինիս առաջարկությամբ միաժամանակ ընդունվում է բանաձև, որով 1945-1946 թվականները հայտարարվում է հոբելյանական տարի: Բանաձևում ընդգծվում էր Մայր Աթոռի կարևոր

---

[103] Տե՛ս «Հասկ», Անթիլիաս, օգոստոս-հոկտեմբեր, 1945, N 8-10, էջ 143, 174: Տե՛ս նաև՝ **Եղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 578:
[104] «Հասկ», Անթիլիաս, հուլիս-օգոստոս, 1946, N 7-8, էջ 199:
[105] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 310, թ. 8:
[106] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 318, թ. 9:
[107] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 310, թ. 9: Տե՛ս նաև՝ «Էջմիածին», Ս.Էջմիածին, հունիս-հուլիս,1945, N 6-7, էջ 31:

դերակատարությունը՝ միաժամանակ շեշտվելով, որ «Կիլիկիոյ կաթողիկոսի յարատեվութիւնը նոյն ժամանակի ընթացքում, ոչ միայն չի խանգարել Եկեղեցւոյ միութեան գաղափարը, այլև նման դեր է կատարել ազգապահպանութեան գործում իրեն ենթակայ թեմերի մեջ, ինչպես և Երուսաղեմի և Կ. Պոլսոյ պատրիարքութիւնները»[108]: Բանաձևում տեղ գտած այս ձևակերպմամբ, առաջնային համարելով Մայր Աթոռի դերը, փորձ էր արվում շեշտադրել նաև հայոց եկեղեցու մյուս աթոռների դերակատարումը հայ ժողովրդի կյանքում: Այդ բանաձևը լիովին արտահայտում էր հայոց եկեղեցում ստեղծված ջերմ մթնոլորտը:

Առաջ անցնելով նշենք, որ կաթողիկոսական աթոռի վերադարձի 500-ամյակին Գևորգ Զ-ն անդրադառնում է նաև իր անդրանիկ կոնդակում[109]: Իսկ 1946 թ. սեպտեմբերի 20-ին հատուկ կոնդակ է հրապարակում այդ առթիվ, որով 1945-1946 թվականները հռչակվում են հոբելյանական և պատվիրում, որ այսուհետ եկեղեցական տոնացույցում հայոց եկեղեցիներում Համբարձման տոնի հետ միասին նշվի նաև այդ օրը: «...Եվ պաշտել յեկեղեցիս զայս տօն ազգային հանդեսիւ և մաղթանօք և երգով «Էջ Միածինն ի Հօրէ» շարականին»[110],- ասված էր կաթողիկոսական կոնդակում:

1947 թ. Անթիլիասի պաշտոնաթերթ «Հասկ»-ի հուլիս-օգոստոս ամիսների հերթական համարն էլ, որպես բացառիկ, նվիրվում է Մայր Աթոռի փոխադրության 500-ամյակին: Այդ համարի շապիկին պատկերված էր Էջմիածնի Մայր տաճարը[111]: Այդ պատմական իրադարձությունը «Հասկ»-ը համարում է «լուսաւոր անկիւնադարձ» հայ ժողովրդի պատմության մեջ[112]:

Գևորգ Զ-ի առաջարկով[113]՝ Գարեգին Հովսեփյանը հետագայում ստանձնում է նաև Մայր Աթոռի Սիսից Էջմիածին տեղափոխման հոբելյանի առթիվ նախատեսվող գիտական ժողովածուի հրատարակման աշխատանքները: Ժողովածուի հրատարակման վերաբերյալ Գարեգին վեհափառը հատուկ շրջաբերական է հրապարակում, որտեղ ուրվագծվում

[108] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 318, թ. 11, շրջերես, գ. 316, թ. 2-3: Տե՛ս նաև՝ «Էջմիածին», Ս. Էջմիածին, հունիս-հուլիս,1945, N 6-7, էջ 32:
[109] Տե՛ս «Էջմիածին», Էջմիածին, ապրիլ-մայիս, 1946, N 4-5, էջ 3-4:
[110] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4513, թ. 16, շրջերես:
[111] Տե՛ս «Հասկ», Անթիլիաս, հուլիս-օգոստոս, 1947, N 7-8, էջ 180:
[112] Տե՛ս «Հասկ», Անթիլիաս, հուլիս-օգոստոս, 1947, N 7-8, էջ 181:
[113] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4509, թ. 1, 8:

է ժողովածուի թեմատիկ շրջանակը[114]: Այդ ժողովածուն տպագրվում է Անթիլիասում, և դրա օրինակներն առաքվում են Մայր Աթոռ և հայաստանյան գիտակրթական այլ հաստատություններ[115]: Այդ հոբելյանին էր նվիրված նաև «Հասկ» հայագիտական տարեգրքի երկրորդ՝ 1949–1950 թթ., համարը[116]: Հոբելյանը նշվում է նաև հայոց եկեղեցու մյուս աթոռներում և թեմերում[117]: Այդ կապակցությամբ իրականացված հանգանակության համակարգումը ևս վստահվում է Կիլիկիո գահակալին[118]:

Ազգային-եկեղեցական ժողովի՝ հունիսի 20-ին տեղի ունեցած չորրորդ նիստում քննության են առնվում Գևորգյան հոգևոր ճեմարանի վերաբացման և նրա նյութական ապահովության հարցերը: Գևորգ Չորեքչյանը դեռ ժողովի բացմանը հայտարարել էր, որ իրենք խորհրդային իշխանություններից ստացել էին հոգևոր ճեմարան բացելու թույլտվություն, սակայն խնդրահարույց էր մնում դրա սաների հետագա նյութական ապահովության խնդիրը[119]: Որոշվում է ճեմարանի համար նախատեսվող ծախսը բաշխել արտասահմանի թեմերի միջև, ինչպես նաև հանձն առնել ճեմարանի ապագա սաների «որդեգրումը»՝ պահանջվող անհրաժեշտ ծախսերով: Գարեգին Ա-ն հայտարարում է, որ իր կողմից ճեմարանի համար ապահովվել է 50 ֆունտ ստերլինգ գումար «այնքան ժամանակ, որքան ճեմարանը կգոյատևե», իսկ առաջին տարվա գումարը վերջինս բերել է իր հետ[120]: Այդ գումարը հատկացվել էր եգիպտահայ բարերարներից մեկի՝ Կարապետ Սարըմյանի՝ ճեմարանին կտակած գումարի տոկոսներից[121]: Ոգևորվելով այդ փաստից՝ ժողովին մասնակից տարբեր թեմերի ներկայացուցիչներ ստանձնում են[122] տարբեր թվով ապագա ճեմարանականների «որդեգրումը»՝ ներառյալ ուսման ծախսերը[123]: Կիլիկիո կա-

---

[114] Տե՛ս «Հասկ», Անթիլիաս, հուլիս-օգոստոս, 1946, N 7–8, էջ 234–235: Տե՛ս նաև՝ **Մաշթոց Աւագ քհնյ. Ոսկերիչեան**, Վեհափառը, Բ. հատոր, Յոբելինական գիրք, Պէյրութ, 1951, տպ. Տէր-Սահակեան, էջ 52–54:

[115] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4528, թ. 5:

[116] Տե՛ս «Հասկ», Անթիլիաս, Հայագիտական տարեգիրք, Բ. տարի, 1949–1950, Անթիլիաս:

[117] Տե՛ս «Սիոն», Երուսաղէմ, մարտ, N 3, 1947, էջ 157–160:

[118] «Հասկ», Անթիլիաս, ապրիլ, 1946, N 4, էջ 118:

[119] Տե՛ս Ձեկուցում Ս. Էջմիածնի հոգեւոր իշխանութեան իր քառամեայ գործունեութեան մասին (941–1945), ա. թ., էջ 11:

[120] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 310, թ. 4:

[121] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 318, թ. 12–13:

[122] Պետք է նշել, որ շատերը հետագայում միջոցների բացակայության պատճառաբանությամբ հրաժարվում են ստանձնած պարտավորությունների կատարումից, այդ մասին տե՛ս «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության», գիրք Զ, էջ 465:

[123] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 318, թ. 1, շրջերես, «Էջմիածին», Ս. Էջմիածին, հունիս-հուլիս, 1945, N 6–7, էջ 33:

թողիկոսությունն իր կողմից ճեմարանին է նվիրաբերում 5000 ԱՄՆ դոլար[124]: Ազգային-եկեղեցական ժողովի մասնակիցները Մայր Աթոռի օգտին կատարում են նաև այլ նվիրատվություններ[125]:

Ազգային-եկեղեցական ժողվում քննարկվում է նաև Մայր Աթոռի տպարանի բացման հարցը: Դա Խորհրդային Միության տարածքում պետական թույլտվությամբ գործող առաջին կրոնա-եկեղեցական տպարանն էր լինելու[126]: Կիլիկիո կաթողիկոսության՝ Բեյրութից ընտրված պատգամավոր Մկրտիչ Մսըրլյանը հանձն է առում Էջմիածնի տպարանի ողջ սարքավորումները ձեռք բերել իր հաշվին[127]: Այդ կապակցությամբ վերջինս Գևորգ Զ-ի կողմից արժանանում է «Գրիգոր Լուսավորիչ» առաջին աստիճանի շքանշանի: Սակայն տպարանի սարքավորումների առաքումը Մայր Աթոռ բավականին ձգձգվում է: Հետագայում այդ կապակցությամբ Գևորգ Զ-ն իր դժգոհությունն է հայտնում Գարեգին Ա-ին[128]:

Նույն նիստում Գարեգին վեհափառը բարձրացնում է ճեմարանի մատենադարանի համալրման հարցը, որի կապակցությամբ ժողովը ընդունում է համապատասխան բանաձև:

Գարեգին Հովսեփյանը ժամանակին, որպես Ամենայն Հայոց կաթողիկոսի լիազոր նվիրակ, իր արտասահմանյան այցելությունների ընթացքում Էջմիածնի Մայր տաճարի վերանաորոգման համար հանգանակել էր 37.114 ԱՄՆ դոլար: Այդ մասին վերջինս զեկուցում է Ազգային եկեղեցական ժողովին և հավաքված գումարը հատկացնում իր նպատակին օգտագործելու համար[129]: 30 հազար դոլար էլ Մայր Աթոռին նվիրում է Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Տիրան ծ. վարդապետը[130]:

Համաձայն թեմական առաջնորդների և փոխթեմականների նախապատրաստական խորհրդակցական ժողովի որոշման՝ Գարեգին վեհափառն առաջարկում է նաև Մայր Աթոռի պահպանության համար սահմանել «Լուսավորչի լումա» տուրքը՝ բոլոր եկեղեցիների ամբողջական հասույթների 5 տոկոսի չափով: Առաջարկն ընդունվում է միաձայնությամբ[131]:

---

[124] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 318, թ. 13-14, գ. 319, թ. 3-4: «Էջմիածին», Ս.Էջմիածին, հունիս-հուլիս,1945, N 6-7, էջ 34: «Հասկ», Ամթիլիաս, օգոստոս-հոկտեմբեր, 1945, N 8-10, էջ 172-173:

[125] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 318, թ. 11-14:

[126] Տե՛ս «Էջմիածին», Ս. Էջմիածին, հունիս-հուլիս, 1945, N 6-7, էջ 31-32:

[127] Տե՛ս «Էջմիածին», Ս. Էջմիածին, հունիս-հուլիս, 1945, N 6-7, էջ 33:

[128] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 319, թ 2, գ. 4509, թ. 4-5, 28, գ. 4518, թ. 1-4:

[129] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 318, թ. 13-14:

[130] Տե՛ս Արձանագրություններ Ազգային եկեղեցական ժողովի (16 հունիսի 1945 թ. ի Ս. Էջմիածին), Եր., 1946, էջ 19:

[131] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 318, թ. 13, շրջերես:

Այդ պարտավորությանը չենթարկվեց միայն Կիլիկիո կաթողիկոսությունը՝ «իբրեւ նոր հաստատուած Անթիլիասում և տարբեր պայմանների ենթակայ, ինքն էլ կարօտ օգնութեան»[132]:

Նշենք, սակայն, որ հունիսի 22-ի նիստում ժողովը որոշում է Մայր Աթոռի պահպանման համար նշված 5 տոկոս տուրքին զուգընթաց՝ առանձին շարունակել «Լուսավորչի լումայի» հավաքումը «անհատական նուիրատուութեան եղանակով»[133]: Հետաքրքիր է, որ Մայր Աթոռի նյութական կարիքների հետագա ապահովման և Մայր տաճարի վերանորոգման հարցում ժողովականները, Ամենայն Հայոց նորընտիր կաթողիկոսի հետ միասին, Կիլիկիո գահակալին ևս վերապահեցին այդ ուղղությամբ ջանքեր գործադրել և կապեր հաստատել հայազգի մեծահարուստների հետ[134]: Այս փաստը կրկին վկայում է երկու աթոռների միջև ստեղծված բարձր մակարդակի փոխվստահության և միասնական գործելու ցանկության մասին:

Ազգային-եկեղեցական ժողովի ամենակարևոր նիստը 6-րդն էր, որը տեղի ունեցավ հունիսի 22-ին: Այդ օրը, վերջիվերջո, կատարվելու էր Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությունը[135]: Ընտրություններին մասնակցում էին 111 պատգամավորներ[136]: Սա բացառիկ երևույթ էր, երբ կաթողիկոսական ընտրություններին մասնակցում էին ոչ միայն հայոց եկեղեցու բոլոր թեմերի[137], այլ նաև նվիրապետական աթոռների ներկայացուցիչները, ինչպես նաև՝ անձամբ Կիլիկիո կաթողիկոսը: Ընտրությունից առաջ նիստը նախագահող Գարեգին Ա Հովսեփյանն իր ելույթում անձամբ է ընդգծում այդ կարևոր հանգամանքը. «Մեր պատմութեան մէջ առաջին անգամ է, որ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը ներկայ է գտնուում հայրապետական ընտրութեան եւ շատ քիչ է պատահել, որ այսքան մեծ թուով պատգամաւորներ հաւաքուեն ընտրութեան համար...: Այս ժողովը նշանակութիւն ունի թէ՛ բուն երկրի եւ թէ՛ գաղութների, այս ներկայացուցչութիւ-

---

[132] «Հասկ», Անթիլիաս, օգոստոս-հոկտեմբեր, 1945, N 8-10, էջ 145:

[133] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 321, թ. 2: Տե՛ս նաև՝ «Էջմիածին», Ս.Էջմիածին, հունիս-հուլիս,1945, N 6-7, էջ 33:

[134] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 318, թ. 13-14:

[135] Տե՛ս «Էջմիածին», Ս. Էջմիածին, հունիս-հուլիս, 1945, N 6-7, էջ 2:

[136] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 321, թ. 3: Էջմիածին», Էջմիածին, ապրիլ-մայիս, 1946, էջ 3-11: Հետաքրքիր է, որ Կիլիկիո կաթողիկոսության «Հասկ» և Երուսաղեմի պատրիարքության «Սիոն» պաշտոնաթերթերը նշում են քվեարկությանը մասնակից 113 պատգամավորների մասին, այդ մասին տե՛ս «Հասկ», Անթիլիաս, օգոստոս-հոկտեմբեր, 1945, N 8-10, էջ 174 և «Սիոն», Երուսաղէմ, հունվար, N 1, 1947, էջ 25-26:

[137] Ամենայն Հայոց կաթողիկոսությունը 1945 թ. դրությամբ ուներ 6 թեմ Խորհրդային Միության տարածքում և 13-ը՝ դրա սահմաններից դուրս

նը ակնյայտ է դարձնում մեր Եկեղեցու միասնականութիւնը: Երդումով սկսեցինք մեր այս ժողովը մեր Ազգի եւ ժողովրդի անունից: Կը կամենայի, որ ժողովը մնար նուիրական եւ սրբազան եւ ընտրութիւնը կատարուէր այնպէս, որ ընտրեալը լինի *Ազգին ընտրեալը* (ընդգծումը բնագրինն է- Է. Հ.)»[138]:

Քվերակության արդյունքում 110 ձայն ստացել էր Գևորգ արք. Չորեքչյանը, իսկ մեկ քվե[139] տրվել էր Գարեգին Ա Հովսեփյանին[140], ինչի կապակցությամբ վերջինս հայտարարում է. «Այս մի քուէն տուել է ինձ իմ Սրբազան եղբայրը, Տ. Տեղակալ արքեպիսկոպոս Չէօրեքչեանը, որին ես մեծ հաճոյքով վերադարձնում եմ հազարապատիկ չափով»[141]: Այս հայտարարությունից հետո Ազգային եկեղեցական ժողովը միաձայնությամբ հաստատում է ընտրությունների արդյունքները[142]: Նիստի վերջում նախագահող Գարեգին Հովսեփյանը հայտարարում է. «Աչքը գիտակցաբար ընտրեց արժանաւորագոյնը»[143]:

Նշենք, որ Պոլսո հայոց պատրիարքության պատգամավորները, ովքեր ուշ տեղ հասնելու պատճառով չէին մասնակցել ընտրություններին, Ազգային եկեղեցական ժողովի վերջին նիստում խնդրում են իրենց վեց ձայները գրանցել ի օգուտ Գարեգին արք. Չորեքչյանի: Նույն հայտարարությամբ հանդես է գալիս նաև ընտրություններին հիվանդության պատճառով չմասնակցած Հալեպի պատգամավորներից Արշակ Գալեմքերյանը[144]: Հարավային Ամերիկայի թեմի ներկայացուցիչները հեռավորության և ճանապարհային դժվարությունների պատճառով Մայր Աթոռ են հասնում միայն 1945 թ. հուլիսի 1-ին, այսինքն՝ Ազգային եկեղեցական ժողովի ավարտից հետո: Բոլոր ուշացածները ևս հատուկ հայտարարությամբ իրենց ձայնը տալիս են Գևորգ արք. Չորեքչյանին[145]: Այսպիսով, նորընտիր հայրապետն ընդհանուր առմամբ ստանում է 118 ձայն[146]:

---

138 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 321, թ. 3: Տե՛ս նաև՝ **Եղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 578-579: Տե՛ս նաև՝ «Էջմիածին», Ս. Էջմիածին, հունիս-հուլիս,1945, N 6-7, էջ 37:

139 Ամերիկայի հայոց թեմի կաթողիկոսական պատվիրակ Գարեգին արք. Խաչատրյանը փաստում է, որ այդ մեկ քվեն Գարեգին Հովսեփյանին տրվել է Գևորգ Չորեքչյանի կողմից, տե՛ս **Գարեգին արք. Խաչատուրյան**, նշվ. աշխ., էջ 18:

140 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 318, թ. 17, շրջերես:

141 «Սիոն», Երուսաղէմ, հունվար, 1947, N 1, էջ 26:

142 Տե՛ս «Էջմիածին», Ս. Էջմիածին, հունիս-հուլիս,1945, N 6-7, էջ 37-40, 63-65:

143 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 318, թ. 17, շրջերես:

144 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 322, թ. 2:

145 Տե՛ս **Գարեգին արք. Խաչատուրյան**, նշվ. աշխ., էջ 9-10, 18: Տե՛ս նաև՝ «Հասկ», օգոստոս-հոկտեմբեր, 1945, N 8-10, էջ 170:

146 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 3, թ. 15:

Ամենայն Հայոց նորընտիր կաթողիկոսի օծումը տեղի է ունենում հունիսի 24-ին՝ Մայր տաճարում[147]: Օծման կարգը կատարվում է Կիլիկիո գահակալ Գարեգին վեհափառի կողմից՝ հայոց եկեղեցու մյուս նվիրապետական աթոռների ներկայացուցիչների և թեմերի առաջնորդների անմիջական մասնակցությամբ [148]: Սա ևս աննախադեպ իրադարձություն էր, որը երբևէ չէր արձանագրվել հայոց եկեղեցու բազմադարյա պատմության մեջ:

Ազգային-եկեղեցական ժողովի վերջին՝ 7-րդ նիստը, տեղի է ունենում հունիսի 25-ին: Այն արդեն նախագահում էր նորընտիր հայրապետ Գևորգ Ջ Չորեքչյանը: Այս նիստում, մի շարք հարցերի հետ, քննարկվում է նաև հայոց եկեղեցու Սահմանադրության նախագիծը, որի հաստատումը նախորդ նիստերում մի քանի անգամ քննարկվել և հետաձգվել էր[149]: Այն անչափ կարևոր փաստաթուղթ էր, որը հիմք էր հանդիսանալու հայոց եկեղեցու հետագա գործունեության և նվիրապետական աթոռների միջև հարաբերությունների կարգավորման համար: Դեռևս 1926 թ. հունվար-փետրվար ամիսներին Գերագույն Հոգևոր խորհուրդը մի քանի նիստերում քննարկել էր հայոց եկեղեցու Սահմանադրության՝ 80 հոդվածներից կազմված մի նախագիծ[150], որը, սակայն, այդպես էլ վերջնական տեսքի չէր բերվել և չէր հաստատվել: Հայոց եկեղեցու Սահմանադրություն ունենալու աշխատանքները չեն դադարում նաև հետագա տարիներին: 1932 թ., կարևորելով Սահմանադրություն ունենալու անհրաժեշտությունը, հրավիրված Ազգային եկեղեցական ժողովին Գերագույն հոգևոր խորհուրդը ներկայացրել էր զեկուցում ապագա Սահմանադրության հիմնական սկզբունքների վերաբերյալ և որոշվել ստեղծել հանձնաժողով դրա նախագիծը մշակելու համար՝ հաշվի առնելով «մեր եկեղեցու կանոնական և ավանդական սկզբունքները»: Սակայն հստակ աշխատանք այդ ուղղությամբ չէր կատարվել: Ուստի Գևորգ արք. Չորեքչյանը Սահմանադրության նախագծի կազմումը հանձնարարում է իրավաբան, հայ եկեղեցական իրավունքի գիտակ Ալեքսանդր Պոպովյանին՝ առաջարկելով առաջնորդվել «հայ եկեղեցու միասնականութեան գաղափարով և ընտրական սկզբունքով, առաջնորդ ունենալ հայ եկեղեցու կանոններն ու հին աւանդութիւնները և այդ նիւթին վերաբերյալ յատնի գրաւոր աղբիւրնե-

---

[147] Տե՛ս «Էջմիածին», Ս. Էջմիածին, հունիս-հուլիս,1945, N 6-7, էջ 2:
[148] Տե՛ս «Էջմիածին», Ս. Էջմիածին, հունիս-հուլիս,1945, N 6-7, էջ 44-49:
[149] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 318: «Էջմիածին», Ս. Էջմիածին, հունիս-հուլիս,1945, N 6-7, էջ 32, 35, 40:
[150] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 57, թթ. 1-10:

ը»[151]: 1941 թ. հունիսին հրավիրված ազգային-եկեղեցական ժողովին քվեարկության է ներկայացվում Սահմանադրության նոր նախագիծը, որի վերջնական հաստատումը, սակայն, կրկին հետաձգվում է:

Հաշվի առնելով, որ հիմնականում արդեն պատրաստ է Սահմանադրության նախագիծը և մտահոգվելով, որ զանազան թեմերում գործում են տարբեր կանոնադրություններ, որոնք հաճախ չեն համապատասխանում Հայոց եկեղեցու սկզբունքներին և դրանցում էականորեն նվազեցված են Ամենայն Հայոց հայրապետի իրավունքները, առանձին դեպքերում էլ «...մեծ չափով շեշտված են թեմի աշխարհականացման և անկախացման միտումներ», Գևորգ Զ-ն առաջարկում է շուտափույթ ընդունել միասնական Սահմանադրություն, որպեսզի նշված երևույթները վերանան[152]:

Քննարկման ընթացքում թե՛ հոգևոր և թե՛ աշխարհիկ պատգամավորների կողմից հնչում են բազմաթիվ առաջարկներ և դիտողություններ: Ուստի վեհափառ Գևորգ Զ-ն ազգային-եկեղեցական ժողովի հաստատմանն է առաջարկում հետևյալ բանաձևը. «Նկատի առնելով, որ Սահմանադրության մէջ արծարծուած միասնականութեան գաղափարը, ինչպես նաև Կիլիկիոյ կաթողիկոսական Աթոռի և պատրիարքական զոյգ Աթոռների փոխյարաբերութիւնները ենթարկուած են հոգևորականների նախապատրաստական ժողովի քննութեան և որոշ համաձայնութիւն է գոյացած, այլ և նկատի առնելով, որ միասնականութեան գաղափարը նոր է հանդես բերուած և Աթոռների փոխյարաբերութիւնները դարձած են իրաւականի, որ շատ դժուարին գործ է, ինչպէս նաև նկատի առնելով, որ ներկայ նախագիծը վերջնական բնոյթ չունի, Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակով պիտի առաջարկուի խմբագրուած Սահմանադրութեան գործադրութիւնը ժամանակաւորապես և գործնական բովէ անցնելէ յետո, յաջորդ Ազգային-եկեղեցական ժողովի կողմից վերջնականապէս պիտի խմբագրուի և հաստատուի, ուստի կառաջարկէ ներկայ նախագիծն ընդունել անփոփոխ»[153]:

Այդ առաջարկն ընդունվում է միաձայնությամբ: Ժամանակավոր գործադրությունից հետո պետք է հաշվի առնվեին առաջարկվող փոփոխություններն ու դիտողությունները և այն վերջնական պիտի հաստատվեր հաջորդ ժողովում: Ակնկալվում էր նաև, որ Սահմանադրությունը քննարկ-

[151] Զեկուցում Ս. Էջմիածնի հոգեւոր իշխանութեան իր քառամեայ գործունեութեան մասին (1941-1945), ա.թ., էջ 7:
[152] Տե՛ս «Էջմիածին», Ս. Էջմիածին, օգոստոս-հոկտեմբեր, 1945, N 8-10, էջ 9:
[153] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 322, թ. 1-2: Տե՛ս նաև՝«Էջմիածին», Ս. Էջմիածին, հունիս-հուլիս,1945, N 6-7, էջ 40:

ման նյութ կդառնա նաև հայկական մամուլում, որտեղ կարտացոլվեն հայ հասարակական շրջանակների տեսակետներն այդ կարևոր փաստաթղթի վերաբերյալ[154]: Այս եկեղեցական Սահմանադրությունը, ըստ էության, գալիս էր փոխարինելու դեռևս 1836 թ. ցարական իշխանությունների կողմից հաստատված և մինչև 1917 թ. գործած «Պոլոժենիե»-ին: Սակայն նշենք, որ դրա վերջնական հաստատումն ու ամբողջական կիրառումը հետաձգվեցին երկար տարիներ[155]:

Ազգային-եկեղեցական ժողովի վերջին նիստում ընտրվում է նաև Գերագույն հոգևոր խորհրդի նոր կազմը[156]:

Վերջին նիստում, երբ ամփոփվում էին ազգային-եկեղեցական ժողովի արդյունքները, պատգամավորներն իրենց ելույթներում հատկապես շեշտում են հայոց եկեղեցու միասնականության, Էջմիածին-Անթիլիաս հարաբերությունների աննախադեպ ջերմացման և հայոց եկեղեցու համար նոր դարաշրջան սկսելու հանգամանքը: Անդրադառնալով հայոց եկեղեցու միասնականության իրողությանը՝ աշխարհական պատգամավորներից Էոժեն Բամբազյանն իր ելույթում նշում է. «հիացումով ու պատկառանքով նայինք սա փառաւոր տեսարանին, երկու կաթողիկոսներ քով քովի նստած, որ երբեք եղած չէ: Գիտակցինք այս նշանակալից պահուն արժեքը»[157]:

Ազգային եկեղեցական ժողովում իր եզրափակիչ ելույթում նորընտիր հայրապետ Գևորգ Զ-ն, շնորհակալություն հայտնելով բոլոր պատգամավորներին, կրկին ընգծում է Կիլիկիո կաթողիկոսի մասնակցության հանգամանքը որպես հայոց եկեղեցու միասնականության դրսևորում: Նորընտիր հայրապետն իր ելույթում անում է մի աննախադեպ հայտարարություն՝ խոստանալով, որ իր հայրապետական երկրորդ կոնդակը. «պիտի ըլլայ, որ Կիլիկիոյ կաթողիկոսը խաչ մը կրէ իր վեղարին վրայ»[158]: Իր խոստմանը համաձայն՝ 1946 թ. դեկտեմբերի 20-ին, Գարեգին Ա. Հովսեփյանի ծննդյան 80-ամյակի առթիվ, բարձր գնահատելով վերջինիս արժանիքներն ու ծառայությունները հայոց եկեղեցուն, Գևորգ Զ-ն հատուկ կոնդակով նրան տալիս է «անձնական իրավունք»՝ վեղարի վրա կրելու ադամանդակուռ խաչ, որի կրումը, որպես կանոն, ավանդաբար եղել է Ամենայն Հայոց կաթողիկոսների մենաշնորհը: Ինչպես գրում է

---

[154] Տե՛ս «Սիոն», Երուսաղէմ, փետրվար, 1947, N 2, էջ 57:

[155] Տե՛ս **Էպլիղաթեան Մ.**, Էջմիածին եւ Անթիլիաս. Հայ եկեղեցւոյ սահմանադրութեան հարցը, Հալէպ, 1994: Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Զ, էջ 492:

[156] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 322, թ. 3:

[157] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 322, թ. 9:

[158] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 322, թ. 10:

ժամանակակիցը՝ «Այս վեհանձն ժեսթը լաւապէս կը մարմնացնէ Էջմիածնի և Անթիլիասի միութիւնն ու համագործակցութիւնը»[159]: Ադամանդակուռ խաչ կրելու իրավունքն Ամենայն հայոց կաթողիկոսներին տրվել է ռուսական կայսրերի կողմից[160]: Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին»-ն էլ հոդվածաշարով անդրադառնում է Գարեգին Հովսեփյանի ծննդյան 80, քահանայության 50 և գիտական-գրական գործունեության 60-ամյակներին[161]:

Ամփոփելով եզրափակիչ ելույթը՝ Գևորգ Զ-ն նշում է. «Այսօր տեսայ համերաշխութեան ոգին վերադարձած է մեր մէջ, որուն համար պիտի աղօթեմ, որ դառնայ մշտնջենական»[162]: Վեհափառի ելույթից հետո ժողովի ատենապետ Ավետիք Իսահակյանն ազգային-եկեղեցական ժողովը հայտարարում է փակված:

Հետաքրքրական էր նաև այն փաստը, որ Ազգային եկեղեցական ժողովի ավարտից հետո հոգևորական պատգամավորների ստորագրությամբ 1945թ. հուլիսի 2-ին դիմում է հրապարակվում՝ ուղղված քրիստոնյա աշխարհին, որտեղ դատապարտվում է Վատիկանի բռնած դիրքը քաղաքական հարցերում: Դիմումը ստորագրվում է նաև Կիլիկիո կաթողիկոսի կողմից[163]:

Հայրենիք ժամանած Ազգային եկեղեցական ժողովի պատգամավորները, մասնավորապես՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին արք. Հովսեփյանը, հանդիպումներ են ունենում կառավարությանն առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդում, որտեղ քննարկվում են եկեղեցու հետ կապված հարցեր, անդրադարձ է կատարվում նաև հայրենադրաձության կազմակերպմանը[164]: Պատգամավորները ցանկություն են հայտնեում հանդիպումներ ունենալ նաև կառավարության ներկայացուցիչների հետ, սակայն նման հանդիպում չի կազմակերպվում: Ազգային եկեղեցական ժողովի պատգամավորների համար կազմակերպվում են նաև մշակութային մի շարք միջոցառումներ և այցելություններ Հայաստանի պատմամշակութային հուշարձաններ, թանգարաններ, գործարաններ և այլն[165]:

---

[159] **Մաշթոց Աւագ քհնյ. Ոսկերիչեան**, նշվ. աշխ., էջ 165:
[160] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4509, թ. 21-24, գ. 4515, թ. 1 և շրջերես: Տե՛ս նաև՝ «Հասկ», Անթիլիաս, մարտ, 1947, N 3, էջ 47-48:
[161] Տե՛ս «Էջմիածին», Ս.Էջմիածին, հունվար-փետրվար, 1947, N 1-2, էջ 3-26:
[162] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 322, թ. 10:
[163] Տե՛ս Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Զ, էջ 289:
[164] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 3, թթ. 5-6:
[165] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 3, թթ. 20-21:

* * *

Կիլիկիո կաթողիկոսության պատվիրակությունը Հայաստանից մեկնում է 1945 թ. հուլիսի 21-ին: Պատվիրակությունը Բաքվի վրայով ժամանում է Իրան, որտեղ հանդիպում է տեղի ունենում Իրանի շահի հետ: Թեհրանում Գարեգին վեհափառը հանդիսավորությամբ օծում է բարերար Ռոման Իսաևի կողմից կառուցված Ս. Աստվածածին եկեղեցին[166]: Պատվիրակությունն Անթիլիաս է վերադառնում օգոստոսի 7-ին[167]:

Էջմիածին կատարած իր այցը և Ազգային եկեղեցական ժողովին մասնակցությունը Գարեգին Հովսեփյանը համարում է «կարեւորագոյն եւ պատմական արժեք ունեցող մի գործ»[168]: Արշակ Չոպանյանին այդ առթիվ գրած նամակում նա գրում է. «Մեր ներկայութիւնը արդիւնաւոր եղաւ երկու Աթոռների սերտ եւ բարեկամական յարաբերութեան, Եկեղեցու միասնականութեան, նիստերի ներդաշնակ եւ կարգաւորեալ ընթացքի եւ փառաւոր, միաձայն ընտրութեան համար, ինչպէս եւ Մայր Աթոռի ապահովութեան խնդրի»[169]:

Մեկ այլ առիթով հերթական անգամ անդրադառնալով Ազգային եկեղեցական ժողովին՝ Գարեգին կաթողիկոսը «...ժողովականների մէջ երևան եկած ներդաշնակ և փոխադարձ հասկացողության գալու տրամադրության ոգին» համարում է բացառիկ երևույթ, նաև ընդգծում, որ. «Միության այս կապը և գիտակցությունը երևան եկան և շեշտվեցին և մի այլ կողմից, թե մի է և անբաժանելի Հայաստանյայց Եկեղեցին, որքան և վարչական տեսակետով տարբերություններ լինեն յուր մասերի մեջ»[170]: Գարեգին վեհափառը դրական է գնահատում նաև Ազգային եկեղեցական ժողովի մեկ այլ աննախադեպ որոշում, որով հայոց եկեղեցու թեմերում՝ պատարագների ժամանակ, պետք է հիշատակվեր բոլոր[171] նվիրապետական աթոռների գահակալների անունները[172]:

---

[166] Ռոման Իսաևը 250 հազար թուման նվիրել էր նաև գեներալ Բաղրամյանի անունը կրող տանկային շարասյան կառուցման համար, 500 հազար թուման Երևանում պատերազմում զոհվածների երեխաների համար մանկապարտեզ կառուցելու համար: Վերջինս Գևորգ արք. Չորեքչյանին կաթողիկոսական ընտրության առթիվ նվիրում է ամերիկյան «Լինքոլն» մակնիշի ավտոմեքենա, տե՛ս Արձանագրություններ Ազգային եկեղեցական ժողովի (16 հունիսի 1945 թ. ի Ս. Էջմիածին), Եր., 1946, էջ 23:

[167] Տե՛ս «Հասկ», Անթիլիաս, օգոստոս-հոկտեմբեր, 1945, N 8-10, էջ 179: Տե՛ս նաև՝ **Եղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 580:

[168] Գարեգին Ա. Յովսեփեան. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1943-1952), հատոր Բ, էջ 175:

[169] Նույն տեղում, էջ 175:

[170] «Էջմիածին», Էջմիածին, փետրվար-մարտ, 1946, N 2-3, էջ 36-37:

[171] Հետագայում Գարեգին Ա-ին գրած նամակներից մեկում Գևորգ Ջ-ն, հիմք ընդունելով Գերագույն Հոգևոր խորհրդի աշխարհիկ անդամների նկատառումները, ավե-

Վեհափառը կարևորում է նաև այն, որ Ազգային եկեղեցական ժողովը, եկեղեցական խնդիրներից բացի. «...ունեցավ յուր մեծ նշանակությունը: Աշխարհի ամեն կողմերից եկած պատգամավորները իրենց աչքերով տեսան հայրենի երկրի պետական, տնտեսական, մտավոր և գեղարվեստական կյանքի մեծ հառաջադիմությունը կարճ ժամանակի մեջ»՝ բացականչելով. «Ինչքա՜ն փոփոխություններ մեզ համար, որ տաս տարի էր, ինչ հեռացել էին հայրենիքից»[173]:

Ազգային եկեղեցական ժողովի մասնակից աշխարհիկ և հոգևոր մյուս պատգամավորները ևս վերադարձից հետո, հանդես գալով տեղական մամուլի էջերում, մեծ ոգևորությամբ էին խոսում ժողովի, ընդունված որոշումների և Խորհրդային Հայաստանի ձեռքբերումների մասին[174]:

Փաստորեն, պատմական այս փուլում աննախադեպ ջերմացել էին Էջմիածին–Անթիլիաս հարաբերությունները, ինչը, անխոս, կարելի է համարել նոր փուլ հայոց եկեղեցու երկու նվիրապետական աթոռների հարաբերություններում: Հարկ է ընդգծել նաև, որ հարաբերությունների ջերմացման վրա իր ազդեցությունն էր ունեցել երկու կաթողիկոսների անձնական ջերմ հարաբերությունները, որոնք ձևավորվել էին դեռևս տարիներ առաջ՝ Գարեգին Հովսեփյանի՝ Մայր Աթոռում ծառայելու տարիներին: Պատահական չէ, որ Գևորգ Չորեքչյանն Ազգային եկեղեցական ժողովի բացման խոսքում հատկապես ընդգծում էր Կիլիկիո գահակալ Գարեգին արք. Հովսեփյանի ունեցած դերը՝ վերջինիս համարելով. «մեր անձնական ընկեր և մեր գաղափարակիցը»[175]: Նշենք նաև, որ դեռևս հեռավոր 1889 թ. Գևորգ Չորեքչյանը, ավարտելով Գևորգյան ճեմարանը, Գարեգին Հովսեփյանի և Կարապետ Տեր-Մկրտչյանի հետ միասին էին ձեռնադրվել սարկավագ[176], իսկ 1917 թ. արդեն վարդապետ Գարեգին Հովսեփյանը և Գևորգ Չորեքչյա-

---

լորդ է համարում պատարագներին Երուսաղեմի և Պոլսո հայոց պատրիարքների անունների հիշատակումը՝ հաշվի առնելով, որ նրանք ենթակա են Ամենայն հայոց կաթողիկոսությանը և պարտավոր են հիշատակել Ամենայն հայոց կաթողիկոսի անունը: Միաժամանակ նշելով, որ դեմ չեն Կիլիկիո կաթողիկոսի անվան հիշատակմանը (Այդ մասին տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4543, թ. 28, շրջերես):

[172] Տե՛ս «Էջմիածին», Ս. Էջմիածին, հունվար, 1946, N 1, էջ 37:

[173] «Էջմիածին», Էջմիածին, հունվար, 1946, N 1, էջ 38, 40:

[174] Տե՛ս «Էջմիածին», Էջմիածին, նոյեմբեր-դեկտեմբեր, 1945, N 11-12, էջ 36-56, հունվար, 1946, N 1, էջ 19-28, փետրվար-մարտ, 1946, N 2-3, էջ 8, 11-12:

[175] Ձեկուցում Ս. Էջմիածնի հոգեւոր իշխանութեան իր քառամեայ գործունեութեան մասին (941-1945), ա. թ., էջ 15:

[176] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 823, ց. 1, գ. 25, թ. 2:

նը նույն օրն են ձեռնադրվում եպիսկոպոս վեհափառ՝ Գևորգ Ե Սուրենյանցի ձեռամբ[177]:

1945 թ. Ազգային եկեղեցական ժողովը և հայոց եկեղեցում տիրող միասնականության ոգին մեծ ոգևորությամբ է ընդունվում ողջ հայության կողմից: «Գէորգ Զ. կաթողիկոս եւ Հայաստանեայց եկեղեցւոյ վերածնունդը»[178] խորագրով հոդվածում Անթիլիասի պաշտոնաթերթ «Հասկ»-ի հոդվածագիրը, ուրախություն հայտնելով հայոց եկեղեցու միասնականության «վերականգնուած» լինելու առթիվ՝ դրանում կարևորում է Գարեգին Ա. Հովսեփյանի դերը: «Ամենէն աւելի անոր կը պարտինք Հայ Եկեղեցւոյ միասնականութեան վերականգնումը»[179],- եզրակացնում է հոդվածագիրը: Իսկ ազգային-եկեղեցական ժողովին մասնակից պատգամավորներից Եփրեմ Էլլեզյանն էլ ճշմարտացիորեն գրում է. «Չէօրեքչեան սրբազանի և Կիլիկիոյ Գարեգին կաթողիկոսի հայեցակէտերուն նույնութիւնն ու հայրենիքին, ժողովուրդին և եկեղեցիին միաժամանակ ծառայելու անոնց կամքը հիմնական դեր կատարեցին համագումարի յաջողութեան գործին մէջ»[180]: «Հասկ»-ի մեկ այլ խմբագրականում, անդրադառնալով 1945 թ. ազգային-եկեղեցական ժողովին՝ Գարեգին վեհափառն իրավացիորեն գրում է. «Ուշադրութեան արժանի և բացառիկ երեւոյթ էր ժողովականների մէջ երեւան եկած ներդաշնակ և փոխադարձ հասկացողութեան գալու տրամադրութեան ոգին»[181]:

Հիրավի, Գարեգին Հովսեփյանը, որպես հայրենասեր և ազգային արժեքներով առաջնորդվող հոգևորական գործիչ, իր հոդվածներում ու աշխատություններում մշտապես կարևորել է հայրենիքի դերն ու դրա գաղափարի սերմանումը աշխարհասփյուռ հայության շրջանում[182]: Այդ իմաստով, թերևս, վերջինիս գործունեությունը կարելի է համարել «Հայաստանակենտրոն», որը դրսևորվում էր նրա գործունեության բոլոր փուլերում, անկախ նրանից, թե ինչպիսի քաղաքական կարգեր էին հաստատված հայրենիքում:

Ազգային եկեղեցական ժողովին առանձին գրքույկով անդրադառնում է նաև Հարավային Ամերիկայի կաթողիկոսական պատվիրակ Գարեգին

---

[177] Տե՛ս «Գարեգին կաթողիկոս Յովսէփեանց», Հրատարակութիւն Ամերիկայի հայոց առաջնորդարանի Մեծի Տանն Կիլիկիոյ երանաշնորհ կաթողիկոսին մահուան տասներորդ տարեդարձին առթիւ, Նյու-Յորք, 1962, էջ 11:

[178] Տե՛ս «Հասկ», Անթիլիաս, մայիս, 1946, N 5, էջ 135-140:

[179] «Հասկ», Անթիլիաս, մայիս, 1946, N 5, էջ 140:

[180] «Հասկ», Անթիլիաս, օգոստոս-հոկտեմբեր, 1945, N 8-10, էջ 181:

[181] «Հասկ», Անթիլիաս, օգոստոս-հոկտեմբեր, 1945, N 8-10, էջ 143:

[182] Տե՛ս Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեան, Դեպի լոյս եւ կեանք, Գ. տպագրութիւն, Անթիլիաս, 2002, էջ 73-78, 133-158, 207-212 և այլն:

արք. Խաչատուրյանը[183]: «Այսպէս, 500 տարիներ յետոյ, որչափ ալ Կիլիկիոյ հայրապետներէն ոմանք անձնապէս յարաբերութիւններ մշակած ըլլան Մայր Աթոռին հետ, առաջին անգամ էր, որ Ամեն. Հ. Կաթող. կը գտնէր արդարացումն իր անուանակոչութեան, իր գերագոյն հեղինակութեան պաշտօնական ճանաչումովը Կիլիկիոյ Հայրապետութեան կողմէ, որով եւ Եկեղեցւոյ միասնականութեան հաստատումովը հայաբնակ բոլոր շրջաններու մէջ»[184],– գրում է սրբազան հայրը:

Հայոց եկեղեցում տիրող ջերմ մթնոլորտն աննկատ չի մնում նաև խորհրդային պաշտոնյաների կողմից: Կաթողիկոսական օծումից հետո՝ հունիսի 20-ին, նոր բացվելիք ճեմարանի շենքում, ճաշկերույթի ժամանակ Ի. Պոլյանսկին իր բաժակաճառում ասում է. «Հայ եկեղեցին պատմութեան ընթացքում երբեք այսպիսի միասնականութիւն և համերաշխութիւն չէ ցոյց տուած, ինչպէս ցուցադրեց այս անգամ»[185]: Այդ ճաշկերույթին Գևորգ Զ-ն հատուկ խմում է Գարեգին Ա-ի կենացը՝ ընդգծելով վերջինիս դերակատարությունը հայ եկեղեցու կյանքում և շեշտում նրա նվիրվածությունը «Էջմիածնի և Հայրենիքի միասնականութեան գաղափարներին»՝ հերթական անգամ խոստանալով իր երկրորդ կոնդակով արտոնել նրան՝ կրելու ադամանդակուռ խաչ[186]:

Եզրակացություններ

Այսպիսով, Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը և աշխարհաքաղաքական նոր իրավիճակը ստեղծել էին նոր իրողություններ, որոնք նպաստեցին հայոց եկեղեցու առջև ծառացած որոշ խնդիրների լուծմանը: Հետպատերազմյան իրավիճակն էականորեն տարբերվում էր 1920-1930-ական թվականներին ստեղծված իրավիճակից: Փոխվել էր խորհրդային իշխանությունների վերաբերմունքը հայոց եկեղեցու նկատմամբ: Այդ ամենն իր ազդեցությունն ունեցավ նաև հայոց եկեղեցու մյուս

[183] Հայոց եկեղեցում տիրող միասնականության հերթական ապացույցն էին Գարեգին արք. Խաչատուրյանի ջերմ խոսքերը կաթողիկոսական ընտրությունների և Խորհրդային Հայաստանի մասին (Այդ մասին տե՛ս **Գարեգին արք. Խաչատուրյան**, նշվ. աշխ.): Դա արվում էր չնայելով այն հանգամանքին, որ 1941 թ. Անթիլիասում տեղի ունեցած կաթողիկոսական ընտրությունների ժամանակ Մայր Աթոռի պատվիրակությունը դեմ էր եղել վերջինիս Կիլիկիո կաթողիկոս ընտրվելուն, որի արդյունքում էլ կաթողիկոսական ընտրությունները չէին կայացել: Գարեգին արք. Խաչատուրյանը 1950 թ. ընտրվել է Պոլսո հայոց պատրիարք:

[184] **Գարեգին արք. Խաչատուրյան**, նշվ. աշխ., էջ 18:

[185] «Հասկ», Անթիլիաս, օգոստոս-հոկտեմբեր, 1945, N 8-10, էջ 175:

[186] Տե՛ս «Հասկ», Անթիլիաս, օգոստոս-հոկտեմբեր, 1945, N 8-10, էջ 176:

նվիրապետական աթոռների ու արտասահմանյան թեմերի հետ Մայր Աթոռի ունեցած հարաբերությունների վրա: Դրական փոփոխություններ կրեցին նաև Էջմիածին–Անթիլիաս հարաբերությունները:

Նախորդ տասնամյակների համեմատ՝ 1920–ական թվականների սկզբներից, դինամիկ զարգացող Էջմիածին–Անթիլիաս հարաբերություններն իրենց ամենաջերմ դրսևորումն ունեցան հենց հետպատերազմյան տարիներին՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ. Չորեքչյանի (1945–1954 թթ.) և Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա. Հովսեփյանի (1943–1952 թթ.) գահակալության շրջանում:

1945 թ. հունիսին հրավիրված Ազգային եկեղեցական ժողովն ու կաթողիկոսական ընտրությունները շատ առումներով աննախադեպ էին հայոց պատմության մեջ: Դրանց առաջին անգամ մասնակցեց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության գահակալ Գարեգին Ա–ն: Այս ու նրա ընդունած ժողովը, այնտեղ կայացված որոշումները նոր սկիզբ հանդիսացան Մայր Աթոռ–Կիլիկիո կաթողիկոսություն հարաբերություններում: Երկու նվիրապետական աթոռների հարաբերություններում ստեղծված աննախադեպ ջերմ մթնոլորտը, ընդհանուր առմամբ, պահպանվեց երկու գահակալների կառավարման գրեթե ողջ ընթացքում: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ այս շրջանում երկու նվիրապետական աթոռների միջև հարաբերություններն ամենաջերմն էին երկու կաթողիկոսական աթոռների ողջ պատմության ընթացքում: Այս իրավիճակը պահպանվեց մինչև 1950–ական թվականների սկիզբը, որից հետո 1956 թ. հայտնի իրադարձությունները ստեղծելու էին եկեղեցական նոր «տագնապ» Էջմիածին–Անթիլիաս հարաբերություններում:

Հետպատերազմյան շրջանում խորհրդային իշխանությունների մոտեցումների որոշակի փոփոխությունները դեպի կրոնական կառույցներն՝ ընդհանրապես և դեպի հայոց եկեղեցին՝ մասնավորապես, ևս կարևոր հանգամանք հանդիսացան Էջմիածին–Անթիլիաս հարբերություններում:

Հիրավի, 1945 թ. ազգային–եկեղեցական ժողովը կարելի է համարել պատմական կարևոր իրադարձություն հայոց եկեղեցու պատմության մեջ, որն իր նպաստը բերեց նաև Էջմիածին–Անթիլիաս հարաբերությունների ջերմացման գործում:

Էդգար Գ. Հովհաննիսյան – գիտական հետաքրքրության շրջանակում են հայկական սփյուռքի, հայրենիք–սփյուռք հարաբերությունների, հայկական հոգևոր–կրոնական կառույցների գործունեության հարցերը: Զբաղվում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության 20–րդ դարի պատմության խնդիրներով:

Էլ հասցե՝ hovhannisyanedgar@yahoo.com

Summary

THE NATIONAL ECCLESIASTICAL ASSEMBLY OF 1945 AND THE ELECTIONS OF THE CATHOLICOS

A New Stage in Etchmiadzin-Antilias Relations

Edgar G. Hovhannisyan

Ph.D in History

Key words - Mother See of Holy Etchmiadzin, the Catholicosate of the Great House of Cilicia, Antelias, George VI Chorekchyan, Garegin I Hovsepyan, National Ecclesiastical Assembly, Etchmiadzin-Antelias relationships.

After the expulsion of the Catholicosate of the Great House of Cilicia from Cilicia, serious changes took place in the relations between Etchmiadzin and Antelias. From 1920 to 1940, relations between the two Catholicosates differed positively from the periods before and after it.

The turning point in relations between Etchmiadzin and Antelias was the National-ecclesiastical Assembly convened in Etchmiadzin in June 1945. At this long-awaited historical meeting, important decisions were made regarding the future activities of the Armenian Church, and, after a long break, the Catholicos of All Armenians were elected. The meeting itself was unprecedented in terms of the direct participation of the Catholicos of Cilicia. This was a phenomenon that had no analogs in the centuries-old history of the Armenian Church.

The end of World War II and the new geopolitical situation created new realities that contributed to the solution of some problems of the Armenian Church. The post-war situation was significantly different from the situation in the 1920s and 1930s. The attitude of the Soviet authorities towards the Armenian Church changed. All this affected the relations of the Mother See with other hierarchical organizations of the Armenian Church.

The National-ecclesiastical Assembly and elections of the Catholicos that took place in June 1945 were in many ways unprecedented in Armenian history. For the first time, the head of the Great House of Cilicia, Garegin A. Hovsepyan, took part in them. This assembly and the decisions made at it marked a new beginning in relations between the Mother See and the Great House of Cilicia. We will not be mistaken if we say that at that time relations between the two Catholicosates were the warmest in history.

The situation created around the Armenian Church also became an important impetus in the context of Motherland-Diaspora relations.

Good interpersonal relations between Catholicos of All Armenians Gevorg VI Chorekchyan (1945-1954) and Catholicos of the Great House of Cilicia Garegin A Hovsepyan (1943-1952) also played an important role in establishing warm relations between Etchmiadzin and Antelias.

Indeed, the National-Ecclesiastical Assembly in 1945 can be considered an important historical event in the history of the Armenian Church.

Резюме

НАЦИОНАЛЬНО-ЦЕРКОВНЫЙ СОБОР 1945 Г. И ВЫБОРЫ КАТОЛИКОСА

Новый этап отношений Эчмиадзина и Антилиаса

Эдгар Г. Оганнесян

Кандидат исторических наук

Ключевые слова - Первопрестольный Святой Эчмиадзин, Католикосат Великого Дома Киликийского, Антилиас, Геворг VI Чорекчян, Гарегин I Овсепян, Национально-церковный собор, отношения между Эчмиадзином и Антилиасом.

После изгнания Католикосата Великого Дома Киликийского из Киликии в отношениях Эчмиадзина и Антилиаса произошли серьезные изменения. В п ериод с 1920 по 1940 гг. отношения между двумя католикосатами положител ьно отличались от периодов до и после этого.Поворотным моментом в отнош ениях Эчмиадзина и Антилиаса стало созванное в Эчмиадзине в июне 1945 го да Национально-церковное собрание. На этом долгожданном историческом собрании были приняты важные решения относительно дальнейшей деятельности Армянской Церкви и после длительного перерыва был избран Католик ос Всех Армян. Само собрание было беспрецедентным с точки зрения непосредственного участия Католикоса Киликийского. Это было явление, не имев шее ранее аналогов в многовековой истории Армянской Церкви.

Окончание Второй мировой войны и сформировавшаяся в этот период геополитическая ситуация создали новые реалии, которые способствовали решению проблем, стоящих перед Армянской Церковью. Послевоенная ситуация существенно отличалась от ситуации 1920-1930-х гг. Отношение советских властей к Армянской Церкви изменилось. Все это оказало положительное влияние на отношения между Первопрестольным Святым Эчмиадзином и другими Иерархическими Престолами и епархиями Армянской Церкви. Отношения между Эчмиадзином и Антилиасом также претерпели позитивные изменения.

Национально-церковный собор, созванный в июне 1945 г., и избрание нового католикоса положили начало новым отношениям между Первопрестольным Эчмиадзином и католикосатом Киликии. Католикос Великого Дома Киликийского Гарегин I Овсепян впервые принял в них участие. Не ошибемся, если скажем, что отношения между двумя католикосатами были самыми теплыми за всю историю Армянской Церкви.

Важным импульсом в контексте улучшения отношений Родина-Диаспора стала ситуация, сложившаяся вокруг Армянской Церкви.

В установлении теплых отношений между Эчмиадзином и Антилиасом в ажную роль сыграли также хорошие межличностные отношения Католикоса Всех Армян Геворга VI Чорекчяна (1945-1954) и Католикоса Великого Дома Киликийского Гарегина I Овсепяна (1943-1952).

Действительно, Национально-церковное собрание 1945 года можно считать важным историческим событием в истории Армянской Церкви.

Օգտագործված գրականություն

1. Արձանագրություններ Ազգային-եկեղեցական ժողովի (16 հունիսի 1945 Թ. Ի. Ս. Էջմիածին), Եր., 1946:
2. **Գարեգին Ա. Յովսեփեան**. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1943-1952), հատոր Բ, Փաստաթուղթերու եւ նիւթերու ժողովածու, կազմող՝ **Գ. Աւագեան**, Անթիլիաս, «Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ», 2017:
3. **Գարեգին արք. Խաչատուրյան**, Ձեկոյց Մայր-Աթոռի եւ Մայր-Հայրենիքի մասին ի Ս. Էջմիածին գումարուած ազգային-եկեղեցական ժողովին առիթով, Պ. Այրէս (Բուենոս Այրէս), 1946:
4. «Գարեգին կաթողիկոս Յովսէփեանց», Հրատարակութիւն Ամերիկայի հայոց առաջնորդարանի Մեծի Տանն Կիլիկիոյ երանաշնորհ կաթողիկոսին մահուան տասներորդ տարեդարձին առթիւ, Նյու-Յորք, 1962:
5. **Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեան**, Դեպի լոյս եւ կեանք, Գ. տպագրութիւն, Անթիլիաս, «Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ», 2002:
6. **Եղիայեան Բ.**, Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, «Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ», 1975:
7. «Զարթոնք», Պէյրութ, 25 մարտի, 1945, N 1408:
8. Ձեկուցում Ս. Էջմիածնի հոգեւոր իշխանութեան իր քառամեայ գործունեութեան մասին (941-1945), ա. թ. :
9. **Էպլիղաթեան Մ.**, Էջմիածին եւ Անթիլիաս. Հայ եկեղեցւոյ սահմանադրութեան հարցը, Հալէպ, 1994:
10. «Էջմիածին», Ս.Էջմիածին, ապրիլ-մայիս, N 4-5, 1944:
11. «Էջմիածին», Ս. Էջմիածին, հունիս, N 6, 1944:
12. «Էջմիածին», Ս.Էջմիածին, հունվար-փետրվար, N 1-2, 1945:
13. «Էջմիածին», Ս. Էջմիածին, մարտ-ապրիլ, N 3-4, 1945:
14. «Էջմիածին», Ս.Էջմիածին, հունիս-հուլիս, N 6-7, 1945:

15. «Էջմիածին», Ս. Էջմիածին, օգոստոս-հոկտեմբեր, N 8-10, 1945:
16. «Էջմիածին», Էջմիածին, փետրվար-մարտ, N 2-3, 1946:
17. «Էջմիածին», Էջմիածին, ապրիլ-մայիս, N 4-5, 1946:
18. «Էջմիածին», Ս.Էջմիածին, հունվար-փետրվար, N 1-2, 1947:
19. «Ժողովուրդի ձայն», 25 մարտի 1945, N 845:
20. «Հայոց Եկեղեցի», Յունիս, 1940, N 6:
21. «Հասկ», Անթիլիաս, մարտ-ապրիլ, 1941, N 3-4:
22. «Հասկ», Անթիլիաս, նոյեմբեր-դեկտեմբեր, 1941, N 11-12:
23. «Հասկ», Անթիլիաս, օգոստոս-հոկտեմբեր, 1944, N 8-10:
24. «Հասկ», Անթիլիաս, նոյեմբեր-դեկտեմբեր, 1944, N 11-12:
25. «Հասկ», Անթիլիաս, հունվար-փետրվար, 1945, N 1-2:
26. «Հասկ», Անթիլիաս, մարտ-ապրիլ, 1945, N 3-4:
27. «Հասկ», Անթիլիաս, մայիս, 1946, N 5:
28. «Հասկ», Անթիլիաս, հունիս-հուլիս, 1945, N 6-7:
29. «Հասկ», Անթիլիաս, օգոստոս-հոկտեմբեր, 1945, N 8-10:
30. «Հասկ», Անթիլիաս, ապրիլ, 1946, N 4:
31. «Հասկ», Անթիլիաս, հուլիս-օգոստոս, 1946, N 7-8:
32. «Հասկ», Անթիլիաս, մարտ, 1947, N 3:
33. «Հասկ», Անթիլիաս, հուլիս-օգոստոս, 1947, N 7-8:
34. «Հասկ», Հայագիտական տարեգիրք, Բ. տարի, 1949-1950, Անթիլիաս:
35. **Հովհաննիսյան Է.**, Մարտնչող անաստվածների միության գործունեությունը Խորհրդային Հայաստանում 1920-1930-ական թթ., «Էջմիածին», հունվար, 2014թ., N 1, էջ 100-107:
36. **Հովհաննիսյան Է.**, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ներդրումը երկրորդ աշխարհամարտում տարված հաղթանակում, Հայ ժողովրդի մասնակցությունը երկրորդ աշխարհամարտին ,գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., «Տիգրան Մեծ հրատարակչություն», 2020, էջ 122-135:
37. **Հովհաննիսյան Է.**, Կիպրոսի թեմի վերակազմությունը և կիպրահայությունը (1920-1940 թթ.). Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյան, Եր., «Լուսակն» հրատ., 2021:
38. **Մաղդյան Ա.,** Գէորգ Զ Չորէքչեան. Կաթողիկոս Ամենայն հայոց, Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչություն», 2011:
39. **Մաշթոց Աւագ քհնյ. Ոսկերիչեան**, Վեհափառը, Բ. հատոր, Յոբելինական գիրք, Պէյրութ, «տպ. Տէր-Սահակեան», 1951, :
40. Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Բ, Խորեն Ա Մուրադբեկյան. Կաթողիկոս Ամենայն Հայոց (1932-1938 թթ.), կազմող՝ **Ս. Բեհբուդյան,** Եր., 1996:
41. Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Զ, Գէորգ Զ Չորէքչեան. Կաթողիկոս Ամենայն Հայոց (1938-1955թթ.), կազմող՝ **Ս. Բեհբուդյան**, Եր., 1999:
42. Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, Գիրք ԻԳ, Տ. Ներսէս արք. Մելիք-Թանգեան (1866-1948), Ս. Էջմիածին, կազմող՝ **Գ. Աւագեան**, 2020:
43. **Ստեփանյանց Ս.**, Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Եր., «Ապոլոն» հրատ., 1994:
44. «Սիոն», Երուսաղեմ, հուլիս-օգոստոս, 1940, N 7-8:

45. «Սիոն», Երուսաղեմ, հունվար-փետրվար, N 1-2, 1943:
46. «Սիոն», Երուսաղեմ, մայիս-հունիս, N 5-6, 1943:
47. «Սիոն», Երուսաղեմ, մայիս-օգոստոս, N 5-8, 1945:
48. «Սիոնը», Երուսաղեմ, հունվար, N 1, 1947:
49. «Սիոն», Երուսաղեմ, փետրվար, N 2, 1947:
50. «Սիոն», Երուսաղեմ, մարտ, N 3, 1947:
51. «Սովետական Հայաստան», Եր., 20 ապրիլի 1945, N 77:
52. «Սովետական Հայաստան», Եր., 16 հունիսի 1945, N 120:
53. «Սովետական Հայաստան», Եր., 17 հունիսի 1945, N 121:
54. **Տերչանյան Ա.** , Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945 թթ), Եր., «Զանգակ-97» 2010:

REFERENCES

1. Ardzanagrut‘yunner Azgayin-ekegets‘akan zhohgovi (16 hunis 1945 T. E. S. Ētchmiatsin), Yer., 1946, **(In Armenian)**.
2. “Garegin A. Yovsēp‘ean. Kat‘oghikos Metsi Tann Kilikioy (1943-1952)”, hat. B, P‘astat‘ught‘eru yew niwt‘eru zhoghovatsu, kazmogh` **G. Awagean**, Ant‘ilias, Tparan Kat‘oghikosut‘ean Hayots‘ Metsi Tann Kilikioy, 2017 (**In Armenian**).
3. **Garegin arq. Khachatrean**, Zekoyc Mayr-Atori ev Mayr-Hayrenik‘i masin I S. Ētchmiatsin gumaruac azgayin-ekeghecakan joghovin artiv, Buenos Ayres, 1946, **(In Armenian).**
4. “Garegin Kat‘oghikos Yovsēp‘eanc”, New-York, 1962, **(In Armenian).**
5. **Garegin A. Kat‘oghikos Yovsēp‘ean**, Depi loys ev kenak, G hratarakutivn, Ant‘ilias, 2002, **(In Armenian)**.
6. **Yeghiayean B**., Zhamanakakits‘ patmut‘iwn Kat‘oghikosut‘ean Hayots‘ Kilikioy 1914-1972, Ant‘ilias, Tparan Kat‘oghikosut‘ean Hayots‘ Metsi Tann Kilikioy, 1975, **(In Armenian).**
7. “Zart‘onq”, Peyrut, 25 marti, 1945, N 1408, **(In Armenian)**.
8. Zekuts‘um S. Ētchmiatsni hwgevor ishkhanutean ir qarameay gorcuneutean masin (941-1945), a.t., **(In Armenian)**.
9. Eplighatean M, Etchmiatsin ev Ant‘ilias. Hay ekegecvoy sahmanadrutean harcy, Halep, 1994, **(In Armenian)**.
10. “Ētchmiatsin”, S. Ētchmiatsin, april-mayis, N 4-5, 1944, **(In Armenian)**.
11. “Ētchmiatsin”, S. Ētchmiatsin, hunis, N 6, 1944, **(In Armenian)**.
12. «Ētchmiatsin”, S. Ētchmiatsin, hunvar-petrvar, N 1-2, 1945, **(In Armenian)**.
13. “Ētchmiatsin”, S. Ētchmiatsin, mart-april, N 3-4, 1945, **(In Armenian)**.
14. “Ētchmiatsin”, S. Ētchmiatsin, hunis-hulis, N 6-7, 1945, **(In Armenian)**.
15. “Ētchmiatsin”, S. Ētchmiatsin, ogostos-september, N 8-10, 1945, **(In Armenian)**.
16. “Ētchmiatsin”, S. Ētchmiatsin, petrvar-mart, N 2-3, 1946, **(In Armenian)**.
17. “Ētchmiatsin”, S. Ētchmiatsin, april-mayis, N 4-5, 1946, **(In Armenian)**.
18. “Ētchmiatsin”, S. Ētchmiatsin, hunvar-petrvar, N 1-2, 1947, **(In Armenian)**.
19. “Zhoghovrdi dzayn”, 25 marti 1945, N 845, **(In Armenian)**.
20. “Hayots‘ ekegeci”, Yunis, 1940, N 6, **(In Armenian)**.
21. “Hask”, Ant‘ilias, mart-april, 1941, N 3-4, **(In Armenian)**.
22. “Hask”, Ant‘ilias, noyember-deltember, 1941, N 11-12, **(In Armenian)**.
23. “Hask”, Ant‘ilias, ogostoes-hoktember, 1944, N 8-10, **(In Armenian)**.
24. “Hask”, Ant‘ilias, noyember-dektember, 1944, N 11-12, **(In Armenian)**.
25. “Hask”, Ant‘ilias, hunvar-petrvar, 1945, N 1-2, **(In Armenian)**.

26. “Hask”, Ant‘ilias, mart-april, 1945, N 3-4, **(In Armenian)**.
27. “Hask”, Ant‘ilias, mayis, 1946, N 5, **(In Armenian)**.
28. “Hask”, Ant‘ilias, hunis-hulis, 1945, N 6-7, **(In Armenian)**.
29. “Hask”, Ant‘ilias, ogostos-hoktember, 1945, N 8-10, **(In Armenian)**.
30. “Hask”, Ant‘ilias, april, 1946, N 4, **(In Armenian)**.
31. “Hask”, Ant‘ilias, hulis-ogostos, 1946, N 7-8, **(In Armenian)**.
32. “Hask”, Ant‘ilias, mart, 1947, N 3, **(In Armenian)**.
33. “Hask”, Ant‘ilias, hulis-ogostos, 1947, N 7-8, **(In Armenian)**.
34. “Hask”, Hayagitakan taregirk‘, B. tari, 1949-1950, Ant‘ilias, **(In Armenian)**.
35. **Hovhannisyan E**., Martnch‘ogh anastvatsneri miut‘yan gortsuneut‘yunĕ Khorhrdayin HAyastanum 1920-1930-akan t‘t‘., “Ētchmiatsin”, hunvar, 2014թ., N 1, ej 100-107 **(In Armenian)**.
36. **Hovhannisyan Ē**., Metsi Tann Kilikioy Kat‘oghikosut‘ean nerdrumĕ erkrord ashkharamartum tarvats hagt‘anakum, Hay zhoghovrdi masnaktsut‘yunĕ erkrord ashkharamartin, gitazoghovi zekuts‘umneri zoghovatsu, Yerevan, “Tigran Mets” hrat., 2020, ej 122-135 **(In Armenian)**.
37. **Hovhannisyan Ē**, Kiprosi temi verakazmutyuny ev kiprahayutyuny (1920-1940 t‘t‘).Petros arqepiskopos Sarajyan, Yer., “Lusakn” hrat., 2021 **(In Armenian).**
38. **Madoyan A.,** Gevorg Z. Ch‘orek‘ch‘ean. Kat‘oghikos Amenayn hayos‘, S. Ētchmiatsin, “Mayr Ator S. Etchmiatsni hrat., 2011 **(In Armenian)**.
39. **Masht‘oc avag k‘ahan Voskerich‘ean**, Vehapary, B. hator, Yobelyanakan girk‘, Peyrut, “tp. Ter-Sahakean”, 1951 **(In Armenian)**.
40. “Vaveragrer hay yekeghets‘u patmut‘yan”, Girk‘ B, Khoren A Muradbekyan. kat‘oghikos Amenayn Hayots‘ (1932-1938 t‘t‘)., khmbagir` S. Behbut‘yan, “Voskan Yerevants‘i” hrat., Yer., 1996 **(In Armenian).**
41. “Vaveragrer hay yekeghets‘u patmut‘yan”, Girk‘ Z, T. T. Gevorg Z Tchorektchyan. kat‘oghikos Amenayn Hayots‘ (1938-1955 t‘t‘)., khmbagir` S. Behbut‘yan, “Voskan Yerevants‘i” hrat., Yer., 1999, **(In Armenian).**
42. “Vaveragrer hay yekeghets‘u patmut‘yan”, Girk‘ EG, T. Nerses arq. Meliq-Tangean (1866-1948), S. Ētchmiatsin, 2020 **(In Armenian**).
43. **Stepanyants S.,** Hay arakelakan ekegetsin stalinyan brnapetut‘yan oroq, Yerevan, “Apolon” hrat., 1994, (**In Armenian**).
44. “Sion”, Erusaghem, hulis-ogostos, 1940, N 7-8 **(In Armenian)**.
45. “Sion”, Erusaghem, hunvar-petrvar, N 1-2, 1943 **(In Armenian)**.
46. “Sion”, Erusaghem, mayis-hunis, N 5-6, 1943 **(In Armenian)**.
47. “Sion”, Erusaghem, mayis-ogostos, N 5-8, 1945 **(In Armenian)**.
48. “Sion”, Erusaghem, hunvar, N 1, 1947 **(In Armenian)**.
49. “Sion”, Erusaghem, petrvar, N 2, 1947 **(In Armenian)**.
50. “Sion”, Erusaghem, mart, N 3, 1947, **(In Armenian)**.
51. “Sovetakan Hayastan”, Yerevan, 20 aprili 1945, N 77 **(In Armenian)**.
52. “Sovetakan Hayastan”, Yerevan, 16 hunisi 1945, N 120 **(In Armenian)**.
53. “Sovetakan Hayastan”, Yerevan, 17 hunisi 1945, N 121 **(In Armenian)**.
54. **Terchanyan S.,** Mayr Ator Surb Ētchmiacni gorcuneutyuny erkrord hamashkharayin paterazmi tarinerin (1939-1945 t‘t‘), Yer., “Zangak-97”, 2010 **(In Armenian).**